

Մաթեմատիկան Դ Պ Բ Ո Ց Ո Ւ Մ

Mathematics

Математика

in
School

В
Школе



Scientific
methodical journal

Գիտամեթոդական
ամսագիր

Научно-методический
журнал

ISSN 1829-4111

№ 4 (117) 2024

Խմբագրական խորհուրդ

Գևորգյան Ս.Ռ., հ.գ.դ., պրոֆեսոր, խորհրդի
պատվավոր նախագահ
Միքայելյան Հ.Ս., մ.գ.դ., ֆ.մ.գ.թ., պրոֆեսոր,
գլխավոր խմբագիր
Բաղդասարյան Գ.Ե., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր
Գևորգյան Գ.Գ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ.,
պրոֆեսոր
Չաքարյան Վ.Ս., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ.,
պրոֆեսոր
Ղազարյան Է.Մ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ֆ.մ.գ.դ.,
պրոֆեսոր
Նահապետյան Բ.Ս., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր
Այվազյան Է.Ի., մ.գ.դ., պրոֆեսոր
Իգոշին Վ.Ի., մ.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ
Ղազարյան Հ.Գ., ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր
Մկրտչյան Մ.Ա., մ.գ.դ., պրոֆեսոր
Մկրտչյան Վ.Ս., տ.գ.դ., պրոֆեսոր, Ավստրալիա
Մովսիսյան Յու. Մ., ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր
Ղուշյան Ա. Խ., մ.գ.թ., պրոֆեսոր
Նոսկով Մ.Վ., ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ
Ռոդիոնով Մ.Ա., մ.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ
Ուրբան Մ.Ա., մ.գ.դ., պրոֆեսոր, Բելառուս
Իսախրյան Մ. Մ., մ.գ.թ., դոցենտ
Հակոբյան Ս. Է., փ.գ.թ., դոցենտ
Հայրապետյան Գ. Ս., մ.գ.թ., դոցենտ
Հարությունյան Հ. Հ., ֆ.մ.գ.թ., դոցենտ
Հովհաննիսյան Բ.Ա., մ.գ.թ., դոցենտ,
պատասխանատու քարտուղար
Կուզնեցովա Ե.Պ., մ.գ.թ., դոցենտ, Բելառուս
Մկրտչյան Ա.Տ., մ.գ.թ., դոցենտ, գ. իս. տեղակալ
Ենոքյան Ա.Վ., մ.գ.թ., ասիստենտ
Նավասարդյան Հ.Ս., մ.գ.թ., ուսուցիչ
Այվազյան Ա.Հ., դասախոս
Ղազարյան Ն.Ա., ուսուցչուհի
Սեդրակյան Ն.Մ., ուսուցիչ, Ղազախստան

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն
RA Ministry of Education, Science, Culture, Sports
Министерство ОНКС РА
Խ. Արմյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարան
Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Армянский государственный педагогический университет
имени Х. Абовяна
«Մաթեմատիկան դպրոցում»
Գիտամեթոդական ամսագիր
Հրատարակվում է 1998 թվականից
"Mathematics in school"
Scientific methodical journal
Published since 1998
«Математика в школе»
Научно-методический журнал
Издается с 1998 г.
Վկայական N01Ա044424, տրված է ՀՀ ԱՆ կողմից ,
16.02.1999թ.
Certificate N01A044424, issued by RA MJ, 16.02.1999.
Certificate N01A044424, issued by RA МЮ, 16.02.1999.-
Երևան, Խանջյան 5, սենյակ 314
Yerevan, Khanjyan 5, room 314
Ереван, Ханджян 5 / 314
Phon: +37493881707
E-mail: h.s.mikaelian@gmail.com
Interet:
Նկարիչ՝ Վ. Միքայելյան
Համակարգչային ձևավորում՝ Ա. Մկրտչյան

Թողարկման պատասխանատու՝
Հ.Ս. Միքայելյան

2024
№ 4 (117) 2024

Մայիս
May
Май

Математика в школе

Mathematics in school

Редколегия

Геворгян С.Р. д.пс.н., профессор, почетный председатель редколлегии
Микаелян Г. С., доктор педагогических наук, к.ф.м.н., профессор, главный редактор
Багдасарян Г.Э., академик НАН РА, д.ф.м.н., профессор
Газарян Э.М., академик НАН РА, д.ф.м.н., профессор
Геворгян Г.Г., академик НАН РА, д.ф.м.н., профессор
Нагапетян Б.С., член-корреспондент НАН РА, д.ф.м.н., профессор
Айвазян Э.И., д.п.н., профессор
Газарян А.Г., д.ф.м.н., профессор
Гущян А. Х., к.п.н., профессор
Игошин В. И., д.п.н., профессор, РФ
Мкртчян М.А., д.п.н., профессор
Мкртчян В. С., д.т.н., профессор, Австралия
Мовсисян Ю. М., д.ф.м.н., профессор
Носков М.В., д.ф.м.н., профессор, РФ
Родионов М.А., д.п.н., профессор, РФ
Урбан М.А., д.п.н., профессор, Беларусь
Акопян С.Е., к.ф.н., доцент
Айрапетян Г.С., к.п.н., доцент
Арутюнян А.Х., к. ф.м.н., доцент
Испирян М. М., к.п.н., доцент
Кузнецова Е.П., к.п.н., доцент, Беларусь
Мкртчян А.Т., к.п.н., доцент, заместитель главного редактора
Ованнисян К.А., к.п.н., доцент, ответственный секретарь
Енокян А.В., к.п.н., Австрия
Навасардян А.С., к.п.н., преподаватель
Авагян А.Г., преподаватель
Казарян Н.А., преподаватель
Седракян Н.М., преподаватель, Казахстан

Editorial board

Gevorgyan S.R. d.pss., Professor, Honorary Chairman of the Board
Mikaelyan H.S., d.p.s., Professor, Editor-in-Chief
Baghdasaryan G.E., Academ. of NAS RA, d.p.m.s., Professor
Gazaryan E.M., Academ. of NAS RA, d.p.m.s., Professor
Gevorgyan G.G., Academ. of NAS RA, d.p.m.s., Professor
Nagapetyan B.S., Corresponding Member of NAS RA, d.p.m.s., Professor
Ayvazyan E.I., d.p.s., Professor
Gazaryan H.G., d.p.m.s., Professor
Gushchyan A.Kh., Ph.D of pe., Professor
Igoshin V.I., d.p.m.s., Professor, RF
Mkrtchyan M.A., d.p.s., Professor
Mkrtchyan V.S., d.t.s., Professor, Australia
Movsisyan Yu.M., d.p.m.s., Professor
Noskov M.V., d.p.m.s., Professor, RF
Rodionov M.A., d.p.s., Professor, R.F.
Urban M.A. d.p.s., Professor, Belarus
Hakopyan S. E., Ph.D of ph., Associate Professor
Harutyunyan H.Kh., Ph.D of math, Associate Professor
Hayrapetyan G.S., Ph.D of pe., Associate Professor
Hovhannisyan K.A., Ph.D. of pe., Associate Professor, responsible secretary
Ispiryan M. M., Ph.D of pe., Associate Professor
Kuznetsova E.P., Ph.D of pe., Associate Professor, Belarus
Mkrtchyan A.T., Ph.D of pe., Associate Professor, Deputy Chief Editor
Enokyan A.V., Ph.D of pe, Austria
Navasardyan A.S., Ph.D of pe., Lecturer
Avagyan A.G., Lecturer
Kazaryan N.A., Lecturer
Sedrakyan N.M., teacher, Kazakhstan

Մաթեմատիկան

Դպրոցում

Բովանդակություն

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ա.Տ. Մկրտչյան

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԵՐԻ ՆԵՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽԵՂԻՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ-----7

Ա.Բ. Մինասյան

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ ՍՏՈԽԱՍՏԻԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ-----28

ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ

Վ.Ս. Մինասյան, Ե.Պ. Կուզնեցովա

ԿՈՄՊԼԵՔՍ ԹՎԵՐԻ ՀԱՆՐԱՀԱՇՎԱԿԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՆՐԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖՈՐՄԱԼԻԶՄԸ ՀԱՂԱՀԱՐԵԼՈՒ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔ-----50

ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳ

Մ.Ա. Արզախյան

ԳԻՏԵՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՄԱԿԱՆԱԼՈՒ ԻՄԱՑԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԽԵՂԻՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ-----64

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ

Է.Պ. Կուզնեցովա, Լ.Լ. Տուխոլկո

ԵՐԿՐԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԾԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԴՊՐՈՑՈՒՄ ԳՐԱՖԻԿԱԿԱՆ ՍՈՂԵԼԱՎՈՐՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔ-----73

ԽՈՐԱՅՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Ֆ.Ա. Կարապետյան

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ-----84

Տ.Ա. Կոստանյան

ՈՍՏՆԱԿԱՅԻՆ ՔԱՌԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ-----92

ՀՈԳԵԿԱՆ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐ

Հ.Ս. Միքայելյան

ԶԶՎԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ ԵՎ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ-----97

Mathematics

In Shcool

Contents

THE CONTENT OF EDUCATION

A.T. Mkrtchyan

THE ISSUE OF INCORPORATING ELEMENTS OF LOGIC INTO THE SCHOOL MATHEMATICS CURRICULUM-----7

A.I. Minasyan

OBSERVATIONS ABOUT THE CONTENT FEATURES OF STOCHASTIC MATERIAL IN A MATHEMATICS COURSE-----28

SCIENTIFIC METHODOICAL

V.S. Minalto, E.P. Kuzniatsova

COMBINATION OF ALGEBRAIC AND GEOMETRIC CONTEXTS OF COMPLEX NUMBERS AS A THEORETICAL BASIS FOR OVERCOMING FORMALISM IN TEACHING-----50

VALUE SYSTEM

M.A. Abgaryan

THE PROBLEM OF FORMING LEVELS OF KNOWLEDGE AND UNDERSTANDING IN THE PROCESS OF TEACHING MATHEMATICS-----64

INTERDISCIPLINARY

E.P. Kuznetsova, L.L. Tukholko

IMPLEMENTATION OF THE CONNECTIONS BETWEEN GEOMETRY AND DRAWING AS THE BASIS FOR FORMING SKILLS IN GRAPHICAL MODELING OF STEREOMETRIC OBJECTS IN SCHOOL-----73

IN-DEPTH LERNING

F.A. Karapetyan

MATHEMATICAL EVENTS AS A WAY TO ACTIVATE STUDENTS' INTERESTS IN THE EDUCATIONAL PROCESS-----84

A.T. Kostanyan

ABOUT PEDAL QUADRANGLES -----92

MENTAL PHENOMENA

H.S. Mikaelian

DISGUST AS A FACTOR NEGATIVELY INFLUENCED ON THE PROCESS OF TEACHING MATHEMATICS AND REASONS FOR THE APPEARANCE-----97

Математика

В школе

Содержание

СОДЕРЖАНИЕ ОБРАЗОВАНИЯ

А.Т. Мкртчян

ПРОБЛЕМА ВКЛЮЧЕНИЯ ЭЛЕМЕНТОВ ЛОГИКИ В ШКОЛЬНЫЙ КУРС МАТЕМАТИКИ-----7

А.И. Минасян

НАБЛЮДЕНИЯ О СОДЕРЖАТЕЛЬНЫХ ОСОБЕННОСТЯХ СТОХАСТИЧЕСКОГО МАТЕРИАЛА В КУРСЕ МАТЕМАТИКИ -----28

НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ

В.С. Миналто, Е.П. Кузнецова

СОЧЕТАНИЕ АЛГЕБРАИЧЕСКИХ И ГЕОМЕТРИЧЕСКИХ КОНТЕКСТОВ КОМПЛЕКСНЫХ ЧИСЕЛ КАК ТЕОРЕТИЧЕСКАЯ ОСНОВА ПРЕОДОЛЕНИЯ ФОРМАЛИЗМА В ИХ ИЗУЧЕНИИ-----50

СИСТЕМА ЦЕННОСТЕЙ

М.А. Абгарян

ПРОБЛЕМА ФОРМИРОВАНИЯ УРОВНЕЙ ЗНАНИЯ И ПОНИМАНИЯ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ МАТЕМАТИКЕ-----64

МЕЖДИСЦИПЛИНАРНЫЙ

Е.П. Кузнецова, Л.Л. Тухолко

РЕАЛИЗАЦИЯ СВЯЗЕЙ ГЕОМЕТРИИ И ЧЕРЧЕНИЯ КАК ОСНОВА ФОРМИРОВАНИЯ НАВЫКОВ ГРАФИЧЕСКОГО МОДЕЛИРОВАНИЯ СТЕРЕОМЕТРИЧЕСКИХ ОБЪЕКТОВ В ШКОЛЕ -----73

УГЛУБЛЕННОЕ ОБУЧЕНИЕ

Ф.А. Карапетян

МАТЕМАТИЧЕСКИЕ МЕРОПРИЯТИЯ КАК СПОСОБ ПОВЫШЕНИЯ ИНТЕРЕСА УЧАЩИХСЯ К УЧЕБНОМУ ПРОЦЕССУ-----84

А.Т. Костанян

О ПЕДАЛЬНЫХ ЧЕТЫРЕХУГОЛЬНИКАХ-----92

ПСИХИЧЕСКИЕ ЯВЛЕНИЯ

Г.С. Микаелян

ОТВРАЩЕНИЕ КАК ФАКТОР, НЕГАТИВНО ВЛИЯЮЩЕЕ НА ПРОЦЕСС ПРЕПОДАВАНИЯ МАТЕМАТИКИ, И ПРИЧИНЫ ЕГО ВОЗНИКНОВЕНИЯ-----97

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ
СОДЕРЖАНИЕ ОБРАЗОВАНИЯ
THE CONTENT OF EDUCATION

ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԻ ՆԵՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ

ORCID:0000-0002-3345-7088

Մկրտչյան Արաքսյա Տիգրանի

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ



Արաքսյա Մկրտչյան

մանկ. գիտ.թեկնածու, դոցենտ

**Մաթեմատիկայի դպրոցական դասընթացում տրամաբանության տարրերի
ներառման խնդիրը**

Տրամաբանությունը որպես գիտություն սկզբնավորվել է Հին Հունաստանում, ավելի քան երկու հազար տարի առաջ, փիլիսոփայության ընդերքում: Տրամաբանությանը հատկացվում էր յուրահատուկ տեղ՝ պայմանավորված հիմնականում այն հանգամանքով, որ այն կապված էր բանավիճելու արվեստի հետ, ինչը հին հունական քաղաք-պետություններում, իսկ հետագայում նաև Հին Հռոմում հասարակական կյանքի կազմակերպման առանձնահատկություններից էր: Այստեղ ստեղծվում էին դպրոցներ, որոնցում մարդիկ սովորում էին ճշմարիտը փնտրելու, բանավիճելու և դիմացինին իրենց տեսակետի մեջ համոզելու արվեստը: Նրանք սովորում էին բազմաթիվ փաստերից ընտրել ճշմարիտները, կառուցել դրանք իրար հետ կապող դատողությունների տրամաբանական շղթա, հանգել ճշմարիտ դատողությունների: Սկզբում ճշմարիտ մտածողության օրենքներն ու ձևերը սովորում էին հռետորական արվեստի շրջանակներում, որը համարվում էր մարդկանց մտածողության, համոզմունքների

ներգործության միջոցներից մեկը: Այդ ժամանակներից էլ ընդունված է, որ տրամաբանությունը գիտություն է ոչ միայն մտածողության, այլև օբյեկտիվ իրականության առարկաների մասին: Հետագայում տրամաբանությունը ուսումնասիրեցին Պարմենիդեսը, Զենոնը, Պրոտոգորասը, Գորգիասը, Դեմոկրիտեսը, Սոկրատեսը, Պլատոնը և այլոք:

Բայց որպես գիտություն տրամաբանության ստեղծողը հունական դասական փիլիսոփայության խոշորագույն ներկայացուցիչ *Արիստոտելը* է (մ.թ.ա. 384-322 թ.թ.), հին աշխարհի մեծագույն փիլիսոփան, որին անվանում են հունական փիլիսոփայության Ալեքսանդր Մակեդոնացի կամ հունական փիլիսոփայության «Զևս»: Նա մշակել է տրամաբանության ընդհանուր տեսությունը և հատուկ աշխատություններ է գրել տրամաբանություն գիտության առանձին բաժինների վերաբերյալ: Արիստոտելն է առաջին անգամ տվել տրամաբանության համակարգված շարադրանքը: Արիստոտելի տրամաբանությունը անվանում են «ավանդական» կամ ֆորմալ տրամաբանություն: Արիստոտելը, վերլուծության ենթարկելով մարդկային մտածողության այնպիսի ձևերը, ինչպիսիք են հասկացությունը, դատողությունը և մտահանգումը, ցույց տվեց, որ իրենց բովանդակությամբ միմյանցից միանգամայն տարբեր դատողությունները կարող են իրար նման լինել ըստ իրենց ձևական կառուցվածքի: Այսպիսով, հնարավոր է դառնում դատողության և մտահանգման կառուցվածքի ուսումնասիրման գործընթացում բոլոր կոնկրետ հասկացությունները փոխարինել բովանդակությունից միանգամայն գուրկ սխմվոլներով: Սխմվոլներն այստեղ հանդես են գալիս որպես փոփոխականներ, որոնց փոխարեն կարելի է տեղադրել տարբեր բովանդակությամբ օժտված հասկացություններ: Զևսական տրամաբանությունը ներառում էր այնպիսի բաժիններ, ինչպիսիք են *հասկացությունը, դատողությունը, ճշմարիտ մտածողության (սկզբունքները) օրենքները, մտահանգումները (դեդուկտիվ, ինդուկտիվ, անալոգիայով), փաստարկման տեսության տրամաբանական հիմունքները, հիպոթեզը*: Չնայած Արիստոտելը տրամաբանության գիտության հիմնադիրն է, սակայն նա տրամաբանությունը առանձին գիտություն չէր դիտում, ընդունելով, որ դա ճշմարտության բացահայտման գործիք է, զենք, մեթոդ կամ մեթոդաբանություն [19]:

Միջնադարյան կրթության համակարգում, սկսած 5-րդ դարից, տրամաբանությանը հատկացվում էր հատուկ տեղ: Տեսական գիտությունները կազմում էին այսպես կոչված *«յոթ ազատ արվեստները»*: Դրանք բաժանվում էին երկու մասի: Առաջին հերթին ուսումնասիրվում էին քերականությունը, հոետորությունը և դիալեկտիկան, որոնք կազմում էին «եռյակ» արվեստները (տրիվիում): Այնուհետև գալիս էին «չափի մասին գիտությունները»՝ թվաբանությունը, երկրաչափությունը, աստղագիտությունը և երաժշտությունը, որոնք կազմում էին «քառյակը» արվեստները (քվադրիում): «Յոթնյակի» ուսումնասիրությունից հետո միայն ուսուցանվում էին «գործնական գիտությունները»՝ տոմարագիտությունը, բժշկագիտությունը և այլն: Իսկ, տրամաբանությունը՝ որպես մտածողության գործիք, մտահանգման և ապացուցման միջոց, համարվում էր ուսման նախադուռը [3, 256]:

Մինչև 14-րդ դարը եվրոպական միջնադարյան գիտության՝ դպրոցային փիլիսոփայության կամ սխոլաստիկայի շրջանակներում, սկզբնական շրջանում վերլուծվում էին հասկացությունների տեսության (սահմանման, բաժանման) հարցերը, իսկ հետագայում սկսեցին մանրամասնորեն վերլուծել դեդուկտիվ մտահանգումների, ապացուցումների և հերքումների, տրամաբանական սխալների յուրահատկությունները:

Գիտության պատմական զարգացման ընթացքում, հատկապես 17-րդ դարից հետո կոնկրետ գիտությունների, իսկ առաջին հերթին *մաթեմատիկայի և տրամաբանության ուսումնասիրման խնդիրներն սկսում են ավելի մերձենալ միմյանց*: Հիմքեր են ստեղծվում մաթեմատիկական տրամաբանության սաղմնավորման համար, և այդ գործում մեծ դեր ունեն հատկապես գերմանացի ականավոր գիտնական Գ. Վ. Լայբնիցի (1646-1716 թ.թ.) և ապա անգլիացի նշանավոր մաթեմատիկոս Զ. Բոլի (1815-1864 թ.թ.) աշխատանքները: Դրանք նվիրված են այն գաղափարի իրականացմանը, ըստ որի՝ տրամաբանության նկատմամբ կիրառվում են հանրահաշվի օրենքները, և տրամաբանական մտահանգումները ներկայացվում են որպես հանրահաշվական բանաձևերի ձևափոխությունների արդյունքներ [1, 12-20]:

Այն բանի շնորհիվ, որ մտածողության օրենքները, կշռադատության ձևերն ու ընթացքը նույնպես դարձան մաթեմատիկական մեթոդներով ուսումնասիրության առարկա, զգալիորեն ընդլայնվեց տրամաբանության հետազոտությունների շրջանակը: Եթե մինչ այդ հնարավոր էր տրամաբանությանը վերաբերող գիտելիքների համակարգն ամբողջությամբ դարձնել ժամանակի առաջավոր դպրոցներում սովորողների համար ուսումնառության նյութ, ապա 19-րդ դարի կեսից հետո տրամաբանության բնագավառն արդեն այնքան էր ընդլայնվել ու խորացել, որ չէր կարող լրիվությամբ ընդգրկվել ուսումնական գործընթացում: Այդ առումով ծագում էին մանկավարժական լուրջ հիմնահարցեր՝ կապված ինչպես կրթության բովանդակության մեջ տրամաբանության բաղադրիչի հստակեցման, այնպես էլ ուսուցման կազմակերպման եղանակների ու մեթոդների հետ:

Դպրոցական ծրագրերում և մաթեմատիկայի դասընթացում տրամաբանության տարրերի ներառման խնդիրը մինչանկախացման շրջանի կրթական համակարգերում

19-րդ և 20-րդ հարյուրամյակների սահմանագծին առաջադեմ մաթեմատիկական և մանկավարժական միտքը միտված էր բարեփոխելու մաթեմատիկայի դպրոցական դասընթացը այնպես, որ այն համապատասխաներ տվյալ ժամանակի պահանջներին: Այդ առումով ուշագրավ է Ս. Կ. Վլասովի հետևյալ տեսակետը. «Միջնակարգ դպրոցի խնդիրը կայանում է նրանում, որ այն տա այնպիսի կրթություն, որը գրգռի մտքի աշխատանքը և գիտության տարբեր ոլորտներում գիտելիքի հանդեպ առաջացնի հետաքրքրություններ, որոնց արդյունքները կվերածվեն ընդհանուր սեփականության» [21, 43-44]: Վլասովի կարծիքով, տրամաբանորեն վերամշակված բովանդակությունը և դրա արդյունքում ձեռք

բերված կարողություններն ու հմտությունները մեծագույն արժեք են ներկայացնում ընդհանուր կրթության համար:

20-րդ դարի մաթեմատիկական կրթության բարեփոխման պատմության մեջ կարելի է առանձնացնել երեք փուլ: Առաջինը ներառում է հարյուրամյակի սկզբից մինչև 70-ական թվականները, երկրորդը վերաբերում է 70-ականներից մինչև 90-ականները, երրորդ փուլը սկսվում է 90-անների սկզբից:

Մաթեմատիկական կրթության բարեփոխման առաջին փուլը իրականացվում էր այնպիսի պայմաններում, երբ մաթեմատիկան դիտարկվում էր որպես իրական աշխարհի քանակական հարաբերություններն ու տարածական ձևերը ուսումնասիրող գիտություն: Այս փուլում մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի ուսումնասիրությունները տարվում էին դիդակտիկական այնպիսի եղանակների փնտրման ուղղությամբ, որոնք կնպաստեյին գիտելիքների, կարողությունների և հմտությունների որակյալ յուրացմանը:

40-ական թվականներին ի հայտ եկան ԷՀՄ-ները, կիբեռնետիկան, և ըստ այդմ, նկատվեց առաջխաղացում դեպի դիսկրետ մաթեմատիկան, ինչը բերեց մաթեմատիկայի այնպիսի բաժինների զարգացմանը, ինչպիսիք էին մաթեմատիկական տրամաբանությունը, հավանականությունների տեսությունը, կոմբինատորիկան, խաղերի և կոդավորման տեսությունները: Մաթեմատիկան ակտիվորեն ներառվեց բոլոր գիտությունների մեջ:

Պատերազմները կրթության բարեփոխումների դադարեցման պատճառ հանդիսացան, ինչի արդյունքում ի թիվս բազմաթիվ այլ սահմանափակումների, մասնավորապես ԽՍՀՄ-ում վերացվեց տրամաբանություն առարկայի ուսուցումը ինչպես հանրակրթական, այնպես էլ բուհական համակարգերում: Սակայն *50-ականներին* խորհրդային միջնակարգ դպրոցը նորից անդրադարձավ տրամաբանությանը, և սկսվեց դասավանդվել առանձին «Տրամաբանություն» առարկան [18], ինչին դեմ էր կրթությանն առնչվող գործիչների, այդ թվում նաև գիտնականների մի զգալի մասը:

70-ական թվականներից սկսվում է մաթեմատիկական կրթության բարեփոխման նոր փուլ: Նշենք ևս մի դրություն, որը նշանակալից ազդեցություն ունեցավ բարեփոխման գաղափարախոսության վրա: Ժ. Պիաժեն, ուսումնասիրելով երեխաների մտավոր զարգացումը, հանգեց հետևյալ եզրակացությանը. «Տարրական մաթեմատիկական յուրաքանչյուր ստրուկտուրայի (հանրահաշվական, կարգային և տոպոլոգիական) պետք է համապատասխանի մտածողության կառուցվածքին: Մաթեմատիկական մտածողությունը նրա կողմից դիտարկվում էր որպես մտածողության տարրական կառուցվածքների կոմպոզիցիա, և այդ պատճառով մտածողության ձևավորման կարևոր պայման է դառնում մաթեմատիկական ստրուկտուրաների ուսումնասիրությունը: Այլ խոսքերով՝ սովորողների մաթեմատիկական մտածողության զարգացման համար ամենամեծ արդյունավետությունն ունի մաթեմատիկայի այնպիսի դասավանդումը, որը հենվում է բազմությունների տեսության և մաթեմատիկական տրամաբանության տարրերի վրա (այսինքն, այնպիսի հասկացություններ, որոնք ավելի վերացական են և

ընդհանրական)»: Ահա այս կերպ մաթեմատիկայի վերաբերյալ ստրուկտուրալ պատկերացումները իրենց ազդեցություններն ունեցան նշված շրջանի մաթեմատիկայի դպրոցական ծրագրերի և դասագրքերի վրա [21, 44]:

Այդ շրջանում մաթեմատիկայի դպրոցական դասընթացի ծայրահեղ մոդեռնիստական շարադրման հետ զուգահեռ, որոշ երկրներում կատարվում էր դրա չափավոր արդիականացում: Դա վերաբերում էր այնպիսի երկրներին, ինչպիսիք էին ԽՍՀՄ-ը, Լեհաստանը, Գերմանիան, Չեխոսլովակիան, Ռումինիան, ԱՄՆ-ն, Անգլիան և այլն: Մի շարք ծրագրերում ներմուծվեցին վիճակագրության և հավանականությունների տեսությունների, մաթեմատիկական տրամաբանության տարրերը, գործողության, խմբի, ստրուկտուրայի հասկացությունները:

ԽՍՀՄ-ում մաթեմատիկական կրթության բարեփոխման աշխատանքները ղեկավարում էր ակադեմիկոս *Ա. Ն. Կոլմոգորովը*: Կարևոր են նրա դիտարկումները մաթեմատիկայի տեսական և պրակտիկ ուսուցման մեջ տրամաբանության դերի հստակեցման վերաբերյալ: Բերենք միայն նման մեկ օրինակ. «Այստեղ հատկապես մեծ է մաթեմատիկական դասավանդողների պատասխանատվությունը, քանի որ առանձին «Տրամաբանություն» առարկա դպրոցում չկա, և տրամաբանության տարրերի հետ դպրոցականների ծանոթացումը գործնականորեն հիմնականում կատարվում է մաթեմատիկայի դասի ընթացքում» [21, 29]:

Սակայն պարզվեց, որ Կոլմոգորովի մոտեցմամբ գրված հանրահաշվի և երկրաչափության դպրոցական դասագրքերը շատ բարդ են սովորողների համար և, ի վերջո, մասնագետներին բերեց այն համոզման, որ պետք է հրաժարվել դրանցից: Դպրոցը նորից անցավ այնպիսի դասագրքերի, որոնց գաղափարախոսությունը շատ քիչ էր տարբերվում 50-60-ականների դասագրքերի գաղափարախոսությունից, և դրանցում բացակայում էին ինչպես բազմատեսաբանական լեզուն, այնպես էլ տրամաբանության տարրերը: Եվ այս միտումը շարունակվեց մինչև ԽՍՀՄ անկումը:

Հետխորհրդային շրջանում տրամաբանության դասավանդման փորձը տարբեր է ինչպես ԽՍՀՄ փորձից, այնպես էլ ըստ առանձին երկրների: Մեր կողմից կատարվել է հետխորհրդային մի քանի պետությունների մաթեմատիկայի հանրակրթական առարկայական ծրագրերի, չափորոշիչների ու կրթական հայեցակարգերի համեմատական վերլուծություն՝ պարզելու համար, թե ինչպես է այս հիմնահարցը լուծում գտնում այնտեղ [15]:

Կատարված վերլուծությունները ցույց են տալիս, որ ուսումնասիրված հետխորհրդային երկրների կրթական համակարգներում մեծ նշանակություն է տրվում տրամաբանության տարրերի իմացությանը, ընդ որում՝ արդի պայմաններում մաթեմատիկայի ուսուցման գործընթացում տրամաբանության անբացահայտ և տարերային գործառույթը բավարար չի համարվում սովորողների մտավոր կարողությունների պատշաճ մակարդակ ապահովելու համար, և անհրաժեշտ է համարվում միջին և ավագ դպրոցների ծրագրերում բացորոշ ձևով ներառել տրամաբանության հիմունքներից ընտրված այնպիսի գիտելիքներ, որոնք համընդհանուր

կիրառություններ ունեն ինչպես մաթեմատիկայում, այնպես էլ մյուս ուսումնական բնագավառներում:

**Դպրցական ծրագրերում և մաթեմատիկայի դասընթացում
տրամաբանության տարրերի ներառման խնդիրը անկախության շրջանի ՀՀ կրթական
համակարգերում**

Անկախացումից հետո ՀՀ հանրակրթության մաթեմատիկայի առարկայական բնագավառի արդիականացման ուղղությամբ տարվող աշխատանքները առաջին փուլում (մինչև 2004 թվականը) կրում էին տարրերային բնույթ: Դրանք կատարվում էին մեկուսի՝ մաթեմատիկական կրթության սահմաններում և չէին ներառվում հանրակրթական ընդհանուր բարեփոխումների շրջանակներում (նման հարց չէր էլ դիտարկվում): Անկախության առաջին տարիներին դեռևս շարունակում էին գործածության մեջ մնալ ԽՍՀՄ-ի օրոք ստեղծված ծրագրերն ու դասագրքերը: Ծրագրերի վերանայման աշխատանքներն սկսվեցին 1996-ին, երբ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի հանձարարությամբ հեղինակային խումբը մշակեց մաթեմատիկայի առարկայախմբի ծրագիրը, որը հիմնականում հենվում էր խորհրդային շրջանում կիրառված համապատասխան ծրագրի վրա և շատ քիչ էր տարբերվում նրանից, իսկ տրամաբանության տարրերի ներառման ուղղությամբ որևէ էական առաջընթաց նրանում բացակայում էր: Սակայն մասնագետների շրջանում հասունանում էր ազգային կրթության հայեցակարգի ստեղծման, մաթեմատիկայի ուսուցման առանձնահատկությունների, կրթության կազմակերպման ավտորիտար հարացույցից հրաժարվելու, կրթությունը հումանիստական խնդիրների իրականացմանը նպաստակառողղելու և նմանատիպ այլ հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը:

Հիմնախնդիրներից մեկը կապված էր տրամաբանության տարրերը մաթեմատիկայի դասընթացում ներառելու հարցի հետ: Այդ կապակցությամբ Հ. Մ. Միքայելյանը նշում է. «Այնպես, ինչպես մայրենի լեզվի խորը իմացությունը հնարավոր է դառնում միայն քերականության համակարգված ուսուցման շնորհիվ, այդպես էլ մտածողության օրինաչափությունների իմացությունը ճիշտ դատելու հնարավորություն է տալիս: Կատարված բազմաթիվ գիտափորձերը ցույց են տալիս, որ առանց տրամաբանության տարրերի ուսուցման, սովորողները ճշգրիտ դատողություններ չեն կարողանում կատարել անգամ պարզ իրավիճակներում: Եվ հանրահաշվի դասընթացում տրամաբանության որոշ թեմաների ներառումը հնարավորություն է տալիս հստակեցնելու սովորողների լեզվատրամաբանական մտածողության հիմքում ընկած կարևորագույն հասկացություններ և ավելի խորացնելու հայոց լեզվի ու հանրահաշվի լեզվի միջև զուգահեռների անցկացումը: Այստեղ խոսքը առաջին հերթին վերաբերում է ասույթների տրամաբանությանը, մասնավորապես՝ տրամաբանական շաղկապների ուսուցմանը: Այս ոչ դեդուկտիվ մոտեցումը հնարավորություն է տալիս սովորողներին՝ հասկանալու մաթեմատիկական մոտեցման հիմնական առանձնահատկությունը, այն է՝

առաջադրվող հարցերի հստակ, երկակի իմաստներ չպարունակող պատասխանների առկայություն» [14, 87-88]: Այս մոտեցման հիման վրա նրա կողմից առաջարկվեց հանրահաշվի ծրագիր, որում միջին դպրոցի համար հարցերի նշված շրջանակում որոշակիորեն լուծվում էր նաև մեզ հետաքրքրող հիմնախնդիրը: Ներկայացված ծրագրային առաջարկի վերաբերյալ մասնագետների շրջանում և ԿԳ նախարարությունում անցկացվեցին քննարկումներ և նախարարության նախաձեռնությամբ 1998-ին կազմակերպվեց մաթեմատիկայի առարկայական ծրագրերին նվիրված մասնագիտական համաժողով: Համաժողովում, ի թիվս հայեցակարգային այլ հարցերի, բարձրացվեց և կարևորվեց մաթեմատիկայի ուսուցումը տեխնիկավարժանքային հագեցվածությունից դեպի սովորողների գաղափարական և մտածողության զարգացման դաշտ նպատակաուղղելու խնդիրը: Արդյունքում՝ ԿԳ նախարարությունը ընդունեց միջին դպրոցի հանրահաշվի նոր ծրագիր, որում ներառված էին նաև տրամաբանության տարրերը: Այնուհետև հայտարարվեց դասագրքերի մրցույթ, և միջին դպրոցի հանրահաշվի դասագրքերի մրցույթը կազմակերպվեց այդ նոր ծրագրին համապատասխան:

Ծրագիրը նախատեսում է տրամաբանական նյութի շարադրանքը *«Տրամաբանության հանրահաշիվը»* ընդհանուր թեմայի շրջանակներում և ներառում է հետևյալ նյութերը. *հավասարումներ, հավասարման արմատները և լուծումները, անհավասարումներ, անհայտի թույլատրելի արժեքների բազմությունը, նույնություններ, նույնական հավասարումներ, նույնաբար ճշմարիտ անհավասարումներ, ասույթ, ասույթի ճշմարտային արժեքները, բանաձևերի համախումբը կամ տրամաբանական գումարը, ոչ խիստ անհավասարություններ, ոչ խիստ անհավասարումներ, բանաձևերի համակարգը կամ տրամաբանական արտադրյալը, կրկնակի անհավասարումներ, միջակայքեր, բանաձևի ժխտումը, բանաձևերի համարժեքությունը, համարժեքության օրենքները, բանաձևերի համախմբերի և համակարգերի համարժեքության օրենքները, բանաձևերի ժխտման հատկությունները, պարզ բանաձևերի կապը, նույնական բանաձևեր:*

Ինչպես տեսնում ենք, այստեղ ներկայացվում են ասույթների տրամաբանության տարրերը և պրեդիկատների տրամաբանության վերաբերյալ պարզագույն հասկացություններ: Նոր ծրագրում տեղ գտած այդ թեմաները արտացոլվեցին ՀՀ հանրակրթական միջին դպրոցի Հ.Ս. Միքայելյանի հեղինակած հանրահաշվի դասագրքերում [10], [11], [12]:

Կրթական բարեփոխումների համար շրջադարձային էր հատկապես 2004 թվականը, երբ ընդունվեց ՀՀ պետական Կրթակարգը, որը ներառում էր կրթական քաղաքականության հիմնական դրույթները, դաստիարակության, ուսուցման, ուսումնառության և գնահատման ընդհանուր սկզբունքները [4, 5-18]: Կրթակարգի հիման վրա ստեղծվեց միջնակարգ կրթության պետական չափորոշիչը: Ճիշտ է, դեռևս 1998-ից կազմվել էր Հանրակրթության պետական չափորոշիչի նախագիծը և 2000 թվականից մտել էր գործածության մեջ, սակայն կարճ ժամանակից հետո կարիք ուներ վերանայումների,

քանի որ այն նախատեսված էր 10-ամյա միջնակարգ դպրոցի համար, այնինչ 2001 թվականին «Կրթության մասին» ՀՀ օրենքում կատարվեցին փոփոխություններ, և անցում կատարվեց 11-ամյա միջնակարգ կրթության: Նրա ազդեցությունը առանձնապես մեծ չէր կարող լինել հետագայում կազմված միջնակարգ կրթության պետական չափորոշիչի վրա, քանի որ վերջինս նախատեսված էր արդեն 12-ամյա կրթության համար: Այդ բոլորով հանդերձ՝ 2000 թվականից գործածության համար նախատեսված պետական չափորոշիչը մաթեմատիկային վերաբերող մասով ուներ որոշակի առաջխաղացում, քանի որ նրանում, մասնավորապես հիմնական դպրոցի ուսուցման խնդիրների ցանկում շեշտվում էր *սովորողների լեզվատրամաբանական մտածողության, ապացուցողական ունակությունների, փաստարկված և հիմնավորված հաջորդական մտային քայլեր կատարելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը*: Ավելին, այդ չափորոշիչի հիման վրա 2001 թվականին մշակված մաթեմատիկայի առարկայական չափորոշչում որոշակիացված էին ուսուցման հենքային բովանդակությունը և սովորողների պատրաստվածությանը ներկայացվող պահանջները, որոնց մեջ հստակ նշված էին նաև տրամաբանության տարրերին վերաբերող հարցերը: Մասնավորապես 6-8-րդ դասարանների հանրահաշվի ուսուցման բովանդակության մեջ ներառված էին ասույթները, բանաձևի ճշմարտային արժեքները, բանաձևերի համախումբը և համակարգը, բանաձևերի համարժեքությունն ու համարժեքության հիմնական օրենքները, նույնությունն ու նույնական ձևափոխությունները: Իսկ սովորողներից պահանջվում էր իմանալ ասույթների հետ կատարվող պարզագույն գործողությունների իմաստը, դրանց կիրառությունները լեզվում, կարողանալ ասույթների հետ կատարվող գործողությունները կիրառել հավասարումների և անհավասարումների համակարգերի և համախմբերի լուծման հասկացությունը ըմբռնելու համար: Այս նոր մոտեցումները որոշակի արտացոլում էին գտել 12-ամյա դպրոցի միջնակարգ կրթության պետական չափորոշչում, որում տրամաբանության տարրերին վերաբերող բովանդակային գիծը «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառում տարածվում էր ինչպես դեպի ներքև (ցածր դասարաններ), այնպես էլ դեպի վերև (բարձր դասարաններ):

2004-2005 թվականներին մշակվեցին մաթեմատիկայի առարկայական չափորոշիչները և ծրագրերը, որոնք փորձարկումներից և լրամշակումներից հետո դրվեցին գործողության մեջ, և դրանց հիման վրա 2006 և 2009 թվականներին կատարվեց համապատասխանաբար միջին և ավագ դպրոցների մաթեմատիկայի դասագրքերի մրցույթ:

Ամփոփելով ՀՀ հանրակրթական գործող ծրագրերում (մաթեմատիկայի առարկայական չափորոշիչներում, ծրագրերում և դասագրքերում) տրամաբանության տարրերի ընդգրկմանը վերաբերող վերլուծությունը, նկատում ենք, որ առկա է հետևյալ պատկերը.

ա) Վերջին տասնամյակում կրթական բոլոր աստիճաններում «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառի համար գործածության երաշխավորված առարկայական ծրագրերում, չափորոշիչներում և դասագրքերում որոշակի համամասնությամբ, որպես

բովանդակային գիծ, ներառվել են տրամաբանության տարրեր, որոնց ուսուցումն իրականացվել է ինչպես ինքնուրույն, այնպես էլ մաթեմատիկական նյութի հետ շաղկապված թեմաներով:

բ) Տրամաբանության տարրերի ուսուցման բովանդակային այդ գծի մեջ ակնհայտ խզում են առաջացրել 2011 թ. գործածության մեջ մտած 7-9-րդ դասարանների հանրահաշվի [16], [17] դասագրքերը և դրանց հարմարեցված առարկայական ծրագիրը, որոնցում տրամաբանության տարրերին վերաբերող թեմաներ իսպառ բացակայում են: Այդ նույն մոտեցումն է ցուցաբերված նաև համապատասխան ուսուցչի ձեռնարկում: Արդյունքում ստեղծվել է մի իրավիճակ, երբ 1-6-րդ դասարաններում տրամաբանության տարրերի ուսուցման համար անհրաժեշտ հիմքերը հետևողականորեն ձևավորվում են, այնուհետև 7-9-րդ դասարաններում բովանդակային այդ բաղադրիչը հանրահաշվի դասընթացում ընդհատվում է և շարունակվում է միայն 10-12-րդ դասարաններում:

Միջին դպրոցում տրամաբանության տարրերի ուսուցման նկատմամբ ցուցաբերված այդ մոտեցումը ամենևին չի համապատասխանում Հանրակրթության պետական չափորոշչում ամրագրված պահանջներին: Հիմնարար նշանակություն ունեցող այդ նորմատիվ փաստաթղթում միջին դպրոցի համար որպես կրթության հիմնական նպատակ է նշվում *սովորողների բարձրակարգ, քննադատական մտածողության զարգացումը, լեզվամտածողության և մաթեմատիկական տրամաբանության հիմքերի ամրապնդումը* [4, կետ 27]: Դրան համապատասխան, ըստ այդ նույն փաստաթղթի, միջին դպրոցում «Մաթեմատիկա» ուսումնական բնագավառը պետք է նպատակաուղղված լինի սովորողների կողմից ինքնուրույն կշռադատություններ անելու, մտքի ճշգրտությունը կարևորելու ունակությունների, հիմնավոր դատողություններ կատարելու համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը [4, կետ 32]: Ներկայացված այդ պահանջների բավարարման արդյունավետ ուղին միջին դպրոցի հանրահաշվի դասընթացում տրամաբանական բաղադրիչի վերականգնումն է, հաշվի առնելով այդ բնագավառում վերջին տարիներին արդեն կուտակված բավականաչափ հարուստ հայրենական փորձը:

Տրամաբանության տարրերը ՀՀ մաթեմատիկայի վերջին չափորոշիչներում

Վերլուծելով մաթեմատիկայի նոր չափորոշիչներն ու առարկայական ծրագրերը՝ նկատում ենք, որ *«Մաթեմատիկա» առարկայի 1-4 դասարանների* ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքներում մաթեմատիկական տրամաբանությունից նախատեսվում են հետևյալ վերջնարդյունքը [5].

- Նկատի, մեկնաբանի, շարունակի օրինաչափությունները տվյալների հաջորդականություններում, աղյուսակներում:

«Մաթեմատիկա» առարկայի 5-6 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները.

- Գտնի օրինաչափություն տրված հաջորդականության տարրերի միջև և այդ

օրինաչափությամբ ավելացնի նոր տարրեր:

- Տարբերի ասույթը ոչ ասույթից և հիմնավորի ասույթի ճշմարիտ կամ կեղծ լինելը:

«Հանրահաշիվ» առարկայի 7-9 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները.

Այստեղ մաթեմատիկական տրամաբանությունից ոչ մի վերջնարդյունք չի ներկայացվում:

«Երկրաչափություն» առարկայի 7-9 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները

- Տարբերի սահմանումը, աքսիոմը, թեորեմը:
- Գաղափար ունենա՝ ինչ է ապացույցը, հերքումը:
- Լուծի ապացուցման խնդիրներ, կիրառի ապացուցման տարբեր եղանակներ:

«Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկայի 10-12 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները (խորացված)

Մաթեմատիկական տրամաբանությունից ոչ մի վերջնարդյունք չի ներկայացվում:

«Երկրաչափություն» առարկայի 10-12 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները (խորացված)

Մաթեմատիկական տրամաբանությունից ոչ մի վերջնարդյունք չի ներկայացվում:
Սակայն սովորողներից պահանջվում է կատարել երկրաչափության տեսական նյութի թեորեմների ապացուցումները:

«Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկայի 10-12 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները (հենքային)

- Սահմանի ասույթը: Հիմնավորի ասույթի ճշմարիտ կամ կեղծ լինելը:
- Տարբերի սահմանումը, պնդումը, աքսիոմը, թեորեմը, ապացույցը և հերքումը:
- Ձևակերպի տրված պնդման ժխտումը, բերի հակաօրինակ:
- Որոշի «և» կապով, «կամ» կապով ասույթների, պնդումների ճիշտ կամ սխալ լինելը:

• Ձևակերպի «և» կապով, «կամ» կապով ասույթների, պնդումների ժխտումները:
• Ձևակերպի պնդման անհրաժեշտ պայմանի օրինակներ, բավարար պայմանի օրինակներ, անհրաժեշտ և բավարար պայմանի օրինակներ:

- Անի հետևություններ՝ ըստ տրված պայմանների:
- Բերի պնդման օրինակ, որն անհրաժեշտ է, բայց ոչ բավարար, և հակառակը:

«Երկրաչափություն» առարկայի 10-12 դասարանների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները (հենքային)

Մաթեմատիկական տրամաբանությունից ոչ մի վերջնարդյունք չի ներկայացվում:
Չի պահանջվում ապացուցման կարողությունների զարգացմանն ուղղված որևէ վերջնարդյունք:

Նոր չափորոշիչների վերոնշյալ վերջնարդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ տրամաբանության տարրերի ներառման տեսանկյունից չափորոշչում առկա են

թերացումներ, ինչը կարող է հանգեցնել տրամաբանական թերկրթվածության և սերտողական ուսուցման ուժեղացման: Մասնավորաբար՝ հանրահաշվի 7-9-րդ դասարանների դասընթացում բացակայում են տրամաբանության տարրերին նվիրված նյութերը, իսկ երկրաչափության 7-9-րդ դասարանների վերջնադրյունքներում չի ակնկալվում ոչ մի թեորեմի ապացուցմանը վերաբերվող պահանջ: Սակայն սովորողներից պահանջվում է, որ սովորողը տարրերի սահմանումը, աքսիոմը, թեորեմը, գաղափար ունենա՝ ինչ է ապացուցումը, հերքումը, լուծի ապացուցման խնդիրներ, կիրառի ապացուցման տարբեր եղանակներ: Այս ամենը ուսուցչին կանգնեցնում է մեթոդական լուրջ, հաճախ նաև անհաղթահարելի խնդիրների առջև:

Անհասկանալի մոտեցում է ցուցաբերված նաև ավագ դպրոցի դասընթացներում:

«Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկայի 10-12 հենքային հոսքերում հստակ ներառված են մաթեմատիկական տրամաբանությունից թեմաներ, սակայն նույն հոսքի երկրաչափության դասընթացում սովորողից չի պահանջվում կատարել որևէ թեորեմի ապացուցում: Եվ ընդհակառակը՝ խորացված հոսքի «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» առարկայի բովանդակության մեջ չեն ներառվում նման թեմաներ, սակայն երկրաչափության դասընթացում պահանջվում է բոլոր թեորեմների ապացուցումների կատարում: Սա և՛ սովորողների, և՛ ուսուցիչների, և՛ դասագրքաստեղծ հեղինակների շրջանում հանգեցնելու է բազմաթիվ մեթոդական խնդիրների:

Բնականաբան այս բացթողումները տանելու են որոշ թեմաների սերտման, չի ձևավորվելու սովորողների՝ տրամաբանական մտածողության ձևավորման ակնկալվող մակարդակը:

Բացի դա, կարծում ենք, որ տրամաբանության տարրերի թերի ուսուցման և մասնավորաբար առանց ապացուցումների ուսուցման, հայեցակարգային շատ պահանջներ հնարավոր չէ իրականացնել:

Տրամաբանության տարրերի ուսումնական նշանակությունը

Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում տրամաբանության տարրերի ներառումը պայմանավորված է ոչ միայն մաթեմատիկական մտքերի տրամաբանական կառուցվածքով: Տրամաբանության տարրերը, նրանում օգտագործվող հասկացություններն ու գործողությունները, իրենց հերթին, արտահայտվում են հանրահաշվական բանաձևերի տեսքով: Այդ պատճառով բնական էր, ինչպես որ պատմականորեն ձևավորվել է գիտության մեջ, մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ևս տրամաբանության տարրերը դիտարկել նախ և առաջ հանրահաշվի դասընթացում: Այդ ուղղությամբ մեզանում առկա է հարուստ փորձ: Դրա վկայություններն են, մասնավորապես, Հ.Ս. Միքայելյանի «Հանրահաշիվ» 8-րդ [13] և Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ա.Ա. «Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր» 11-րդ դասարանների [2] դասագրքերը, որոնցում ընդգրկված տրամաբանության

տարրերը կազմում են «Տրամաբանության հանրահաշիվ» առանձին բովանդակային գիծ: Հանրահաշվի դասընթացում տրամաբանության տարրերի ներառման շնորհիվ նոր հնարավորություններ են ստեղծվում կրթության բովանդակության ճանաչողական և կիրառական գործառույթները միասնաբար իրականացնելու համար: Դրա արդյունքում, մի կողմից, արդյունավետ լուծում են ստանում ներառարկայական ուսումնական մի շարք խնդիրներ, որոնք կապված են բուն մաթեմատիկական նյութի հիմնավոր յուրացման՝ մինչ այդ հանդիպող դժվարությունների հաղթահարման հետ, մյուս կողմից, նպաստավոր պայմաններ են ստեղծվում նաև սովորողների արժեքային համակարգի և արժեքային կողմնորոշման ձևավորման ու զարգացման համար:

Նշենք ևս մեկ հանգամանք, որը կարևոր է կրթական ծրագրերում տրամաբանական նյութի ներառման «տեղը» որոշելու առումով: Տրամաբանության տարրերի՝ մաթեմատիկական հենքից կտրված շարադրանքը չի ընկալվում սովորողների կողմից [20, 221-238]: Այդ տեսակետից էլ հանրահաշվի դասընթացում նշված նյութի շարադրանքը խարսխված է մաթեմատիկական նյութի վրա: Նման մոտեցումը մի կողմից իրականացնում է տրամաբանության տարրերի հստակ և խորը ընկալում, մյուս կողմից նպաստում է մաթեմատիկական մի շարք առանցքային հասկացությունների տիրապետմանը: Այս շարքում կարելի է առանձնացնել հավասարման և անհավասարման լուծման, անհավասարության, $\pm$ նշանի, միջակայքերի, համակարգերի և համախմբերի, հետևության և համարժեքության, ժխտման և այլ հասկացություններ:

Հանրահաշվի դասընթացում տրամաբանության որոշ թեմաների ներառումը հնարավորություն է տալիս հստակեցնելու սովորողների լեզվատրամաբանական մտածողության հիմքում ընկած մի շարք կարևոր հասկացություններ և ավելի խորացնելու հայոց լեզվի ու հանրահաշվի լեզվի միջև գույքահեռների անցկացումը: Ինչպես հայոց լեզվում, հանրահաշվում նույնպես պարզ նախադասություններից «և», «կամ», «ոչ» և այլ շաղկապների օգնությամբ ստացվում են բարդ նախադասությունները: Նույն կերպ է կատարվում հանրահաշվական նախադասությունների՝ բանաձևերի ստացումը պարզ նախադասություններից՝ տրամաբանական կապերի միջոցով» [14, 32]: Այդ կապակցությամբ կարևոր է առօրյա կյանքին վերաբերող օրինակների զուգորդումը մաթեմատիկական բնույթի օրինակների հետ, հավասարություն-հավասարում և անհավասարություն-անհավասարում գույքահեռների անցկացումը, տրամաբանական գումարին նվիրված դասը անցկացնելիս $\pm a$ գրության վրա հաստուկ ուշադրություն դարձնելը (անհրաժեշտ է հաշվի առնել, որ մաթեմատիկայում մեծ տարածում ունեցող այս գրառումը սովորողների ճնշող մեծամասնությունը չի հասկանում: Մինչդեռ տրամաբանական գումարի գաղափարի դիտարկման շնորհիվ լիովին հասկանալի է դառնում այն) [14, 19]: Ասվածը վերաբերում է նաև ոչ խիստ անհավասարություններին և ոչ խիստ անհավասարումներին: $a \leq b$ կարևորագույն բանաձևի իմաստը շատ աշակերտներ չեն յուրացնում: Նախ անհրաժեշտ է սովորողին հասկացնել, որ նշված բանաձևը ներմուծվում է «մեծ չէ» հարաբերությունը հանրահաշվորեն գրառելու համար: Այնուհետև՝ պետք է կատարել բանաձևի ճշմարիտ լինելու խնդրի պարզաբանումը:

Տրամաբանական գումարի գաղափարի առկայությունը հնարավորություն է տալիս հստակորեն իրականացնել այս խնդիրը: Հարկ է հիշել և հաշվի առնել նաև, որ այդ բանաձևի համար նախկինում գործածվող «անհավասարություն» անվանումն իր հերթին սովորողի մոտ առաջացնում է յուրացումն արգելակող հոգեբանական պատճեն². ինչու՞, օրինակ, $1 \leq 1$ բանաձևը անվանենք անհավասարություն, երբ այն $1=1$ հավասարության և $1 < 1$ բանաձևի տրամաբանական գումարն է: Իսկ բանաձևերի տրամաբանական արտադրյալի գաղափարի դիտարկումն օգնում է հասնելու նրան, որ սովորողները հստակ յուրացնեն թվային միջակայքերը, որոնք անհրաժեշտ են հավասարումների և անհավասարումների համակարգերի ու համախմբերի լուծումները պատկերավոր արտահայտելու համար:

Տրամաբանական գումարի և արտադրյալի ներմուծումը հնարավորություն է տալիս լուծելու հետևյալ կարևոր մանկավարժամեթոդական խնդիրները, որոնք փոխադարձաբանականորեն են իրարով և լուծվում են համալիր եղանակով:

ա. Նպաստում է մայրենի լեզվի իմացությանը:

բ. Թույլ է տալիս դիտարկելու և լուծելու կիրառական ոլորտի մի շարք խնդիրներ:

գ. Օգնում է ավանդական մաթեմատիկական հասկացությունների գիտակցական ըմբռնմանը:

Սովորողների լեզվատրամաբանական մտածողության հստակեցման մեջ շատ մեծ է տրամաբանական համարժեքության դերը: Միննույն փոփոխականը պարունակող երկու բանաձևեր անվանում են համարժեք, եթե նրանք ունեն միննույն լուծումները: Այս ընդհանուր ձևակերպման մեջ են մտնում ինչպես հավասարումների, այնպես էլ անհավասարումների ու դրանց համակարգերի և համախմբերի համարժեքության հասկացությունները: Համարժեքության անդրադարձելիության, համաչափության և փոխանցելիության հատկությունների կողքին մեծ նշանակություն ունի համակարգերի և համախմբերի համարժեքությունների դիտարկումը, որը մեծապես նպաստում է հանրահաշվական այդ կարևորագույն նյութի գիտակցական ըմբռնմանը: Ընդ որում՝ եթե նշված օրենքներն ունեն ինտուիտիվ ընկալման պարզություն և նրանց կիրառությունը շատ բնական է՝ անգամ առանց այդ օրենքների բացահայտ ձևակերպման, ապա նույնը չի կարելի ասել ճշմարիտ կամ կեղծ բաղադրիչներով համակարգերի և համախմբերի համար (սովորողների մեծ մասը գլուխ չի հանում նույնիսկ $(0 < 1$ և $x < 2)$, $(0 > 1$ և $x < 2)$ տիպի պարզագույն համակարգերից): Բանն այն է, որ բնական լեզվի միջոցները ոչ միշտ են բավարար մաթեմատիկական բանաձևերի բովանդակությունը ճշգրիտ արտահայտելու և միանշանակ ընկալելու համար: Բնական լեզվով արտահայտված մաթեմատիկական տեքստի ճշգրտությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել այդ տեքստի տրամաբանական կառուցվածքին համապատասխանող որոշակի ֆորմալացում: Դրա շնորհիվ տեքստն ստանում է, ինչպես ընդունված է ասել, հանրահաշվակերպ ձևակերպում, որի նկատմամբ արդեն կիրառելի են համարժեքության օրենքները, և այդ դեպքում խնդրի լուծումը հանգում է հիմնավոր և ճիշտ պատասխանի:

Ֆորմալացման միջոցով ոչ միայն պարզ և ընկալելի տեսք են ստանում «և», «կամ», «եթե...», «այս...» շաղկապներ պարունակող բարդ դատողությունների կառուցվածքները (դրանք ներկայացվում են $p \& q$, $p \vee q$, $p \rightarrow q$ տեսքի բանաձևերով), այլև, որ ավելի կարևոր է, հեշտությամբ են կանխվում դրանց ժխտումները կատարելու և ստացված բանաձևերի միջև համարժեքություններ հաստատելու գործողություններում թույլ տրվող սխալները: Իսկ այդպիսի գործողություններ կատարելու անհրաժեշտություն առաջանում է հաճախ, ինչպես օրինակ՝ տրված պնդման համար հակադիր և հակադարձ պնդումներ ձևակերպելիս, հակասող ենթադրությամբ ապացուցումներ կատարելիս և այլն: Առանց տրամաբանական որոշակի գիտելիքների, այդ գործողություններում թույլ տրվող սխալներն անհամեմատ շատ կլինեին, եթե գործ ենք ունենում փոփոխականներ պարունակող դատողությունների հետ, որոնցում առկա են գոյության կամ ընդհանրության քվանտորներ, իսկ խնդրի կամ թեորեմի ձևակերպման մեջ մասնակցում են «այն և միայն այն դեպքում» կամ «անհրաժեշտ է և բավարար» բառակապակցությունները: Այդ և նմանատիպ բազմաթիվ այլ խնդիրներ զգալիորեն հեշտ են լուծվում, երբ նախ ձևայնացվում է դատողությունների կառուցվածքը, և այնուհետև նրա նկատմամբ կիրառվում այս կամ այն կանոնը:

Այսպիսով, տրամաբանության տարրերի ուսուցումը կարևորվում է մաթեմատիկայի դասավանդման մեթոդիկայի, ներառարկայական մանկավարժական խնդիրներին արդյունավետ լուծումներ տալու տեսանկյունից: Եվ դա ծառայում է ավելի ընդգրկուն նպատակի՝ սովորողների լեզվական-տրամաբանական կարողությունների զարգացմանը, որը կարելի է դիտել որպես մաթեմատիկատրամաբանական կրթական մշակույթի կարևոր և անբաժան բաղադրիչ:

Տրամաբանության տարրերի ուսուցման դաստիարակչական նշանակությունը

Մաթեմատիկական կրթությունն ունի արժեքների ձևավորման մեծ ներուժ: Այդ ներուժը լայնորեն դրսևորվում է ինչպես մաթեմատիկայի համար ավանդական՝ ճշմարտական, հոգեկան և գեղագիտական, այնպես էլ ոչ ավանդական՝ բարոյական, ազգային, սոցիալական, համամարդկային արժեքների ձևավորման գործընթացներում: Մաթեմատիկայի դասընթացում տրամաբանության տարրերի ներառումը լրացուցիչ լիցք է հաղորդում մաթեմատիկայի դասավանդման միջոցով արժեքների ձևավորման գործընթացին և այն դարձնում ամբողջական:

Բարոյական արժեքներ: Մեծ է մաթեմատիկայի կրթական ներուժը բարոյական արժեքների ձևավորման հարցում, որի հիմնավորումը կարելի է տեսնել Հ.Ս. Միքայելյանի «Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը» մենագրության մեջ [8]:

Հանրահայտ է, որ սովորողներին առանձնակի դժվարություն են հարուցում փոփոխական պարունակող դատողությունները: Դրանց հետ տրամաբանական գործողությունների՝ գումարման, բազմապատկման, ժխտման կատարումը հեշտությամբ

չի ընկալվում աշակերտների մի զգալի մասի կողմից: Այդ դժվարությունները հաջողությամբ կարելի է հաղթահարել առօրեական օրինակների և վարժությունների ներգրավման միջոցով: [13]-ում նման վարժությունները, որոնք խմբավորվում են «Կիրառական» բաժնում, ներառում են բարոյական ամենատարբեր արժեքներ: Միշտ արժեքի վերաբերյալ, օրինակ, բերվում են այսպիսի վարժություններ:

551. Նշեք փոփոխականի արժեք, որի դեպքում դատողությունը ճշմարիտ է, և փոփոխականի արժեք, որի դեպքում դատողությունը կեղծ է.

գ. Աղջիկը սիրում է իր մայրիկին:

ե. Նա սիրում է հայրենիքը:

ը. Նա իմ սիրելի գրողն է:

թ. Նա իմ սիրելի նկարիչն է:

Այստեղ գ և է խնդիրները պարունակում են մեկական փոփոխական. առաջինում փոփոխականը աղջիկն է, երկրորդում՝ նա-ն: Աշակերտները հեշտությամբ են բերում փոփոխականների այնպիսի օրինակներ, որոնց դեպքում դատողությունները ընդունում են ճշմարիտ արժեքներ: Մյուս երկու՝ ը և թ խնդիրները պարունակում են երկուական փոփոխականներ: Առաջինում, օրինակ, փոփոխականներն են նա-ն և գրողը: Բնականաբար, այստեղ այդ փոփոխականների արժեքները, որոնց դեպքում դատողությունը դառնում է ճշմարիտ կամ կեղծ, պայմանավորված են իրար հետ. աշակերտներից մեկը սիրում է գրողներից մեկին, մյուսը կարող է չսիրել և այլն:

Դիտարկենք հաջորդ վարժությունը, որն ավելի դժվար է. նրանում առաջադրված խնդիրները պարունակում են ընդհանրության և գոյության քվանտորներ:

555. Ճշմարիտ է, թե՞ կեղծ դատողությունը.

ա. Ցանկացած մարդ սիրում է իր ծնողներին,

ե. աշակերտը սիրում է իր ուսուցչին,

գ. կա աշակերտ, որը ասում է դպրոցը:

Այստեղ նշենք, որ ա և գ առաջադրանքներում քվանտորները մասնակցում են անմիջականորեն. առաջինում ընդհանրության քվանտորն է «ցանկացած» բառը, իսկ երկրորդում գոյության քվանտորն է «կա» բառը: Աշակերտներին պետք է սովորեցնել, որ նախադասության մեջ անորոշ ենթական ենթադրում է ընդհանրության քվանտորի առկայություն:

Նմանատիպ վարժություններ են բերվում նաև *բարու*, *հարգանքի* և բարոյական այլ արժեքների վերաբերյալ: Եթե ծրագրային նյութի մաթեմատիկական բաժինը համեմատաբար դժվար է ընկալվում և անհետաքրքիր ու ձանձրալի կարող է լինել աշակերտների համար, ապա բերված և բարոյական այլ արժեքներին նվիրված վարժությունները և դրանց լուծումները աշխուժացնում են դասը, կենդանի հետաքրքրություն առաջացնում նրա նկատմամբ: Միաժամանակ, դրանք ուսուցչին հնարավորություն են տալիս խոսակցություն վարել բարու և չարի, սիրո և ատելության, հարգանքի և արժանապատվության, ինչպես նաև բարոյական այլ արժեքների մասին: Նման բարոյական խոսակցությունները և զրույցները, որ հենված են դասագրքային նյութի

վրա, ունեն սովորողների կողմից բնական ընկալման առանձնահատկություն և չեն դիտվում որպես «իրենց գլխին կարդացվող քարոզներ»:

Հիշողության զարգացման խնդրին հաջողությամբ ծառայում է տրամաբանության տարրերի ուսուցումը: Սակայն վերջինս հնարավորություն է տալիս փաստերի հիշողությունը դարձնել ավելի արդյունավետ, որովհետև թույլ է տալիս դրանք դարձնել համակարգված, տրամաբանորեն մշակված, ինչը լրացուցիչ խթան է հիշողության համար:

Քննարկենք նաև *երջանկության* բարոյական արժեքի ձևավորման և զարգացման գործում մաթեմատիկայի դասընթացում տրամաբանության տարրերի ներառման նշանակությունը: Երջանկության բարոյական արժեքի վերաբերյալ ընդունված մոտեցումներից մեկում երջանկության հոգևոր բաղադրիչներից մեկը համարվում է *հոգեկան առողջությունը* [9, 151-170]: Վերջինս առաջին հերթին նշանակում է առողջ, տրամաբանական մտածողության, տրամաբանված, հիմնավորված և փաստարկված խոսքի առկայություն, ինչը տալիս է հենց տրամաբանության օրենքների ներգրավումը խոսքի մեջ: Նման մտածողությունը և խոսքը մարդուն թույլ է տալիս մտածել հստակ, տրամաբանորեն, անել ընդհանրացումներ, մասնավորեցումներ, համեմատություններ, մտահանգումներ, կիրառել մտքի ճշմարտության հաստատման և հերքման, մտածողության այլ հնարքներ, չվախենալ բանավեճից, հաջողությամբ պաշտպանել սեփական տեսակետը, համոզել դիմացինին, խուսափել սխալներից, չխորացնել և ընդունել սեփական սխալը, հայտնաբերել սխալ տեղեկությունը և դատողությունը: Անտրամաբանական մտածողությունը հանգեցնում է ավելորդ լարման և ներվային արգելակումների:

Գեղագիտական արժեքներ: Գիտական գեղեցիկի կարևորագույն օբյեկտիվ հատկանիշներից մեկը *տրամաբանական խստությունն* է: Եթե հաշվի առնենք, որ առանց տրամաբանության տարրերի ներգրավման գրեթե անհնար է ապահովել մաթեմատիկական նյութի շարադրման տրամաբանական խստությունը, ապա պարզ է դառնում տրամաբանության հանրահաշվի դերը գիտական գեղեցիկի այս հատկանիշի ձևավորման խնդրում: Ավելացնենք նաև, որ ամերիկյան հայտնի մաթեմատիկոս և մանկավարժ Պոլ Լոկիարդը մաթեմատիկան անվանում է ապացուցումների արվեստ: Իսկ մաթեմատիկական ապացուցումը չի կարող խստորեն իրագործվել առանց տրամաբանական հիմնավորվածության: Հետևաբար, տրամաբանական խստությունը մաթեմատիկայի գեղագիտական էությունը արտահայտող ամենակարևոր հատկանիշն է, և նրա լիարժեք դրսևորման գործում անգնահատելի է տրամաբանության տարրերի կիրառությունը և, ուրեմն, ներառումը մաթեմատիկայի դասընթացում:

Մաթեմատիկական նյութի շարադրանքի մեջ տրամաբանության տարրերի ներառումը ընդգծում և մեծացնում է նաև գիտական գեղեցիկի այնպիսի օբյեկտիվ հատկանիշներ, ինչպիսիք են *հստակությունը, բազմազանությունների միասնությունը, ընդհանրականությունը* և այլն:

Ճշմարտական արժեք: Այստեղ առաջին հերթին խոսքը վերաբերում է բուն ճշմարիտի և նրա հետ կապված առարկաների և երևույթների ձևավորման և ըմբռնման խնդրին, ինչը անհնար է լիարժեք իրականացնել առանց տրամաբանության տարրերի կիրառության: Ճշմարտության որոնման ճանապարհը լուսավորվում է տրամաբանական մտածողությամբ, մտածողության գործընթացում տրամաբանության օրենքների, կանոնների, մոտեցումների ներգրավմամբ: Նման գործընթացը այսօր մաթեմատիկայում իրականացվում է մաթեմատիկական տրամաբանության օգնությամբ, իսկ հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում այն կարելի է իրականացնել նրանում տրամաբանության տարրերի ներառման միջոցով:

Տրամաբանության տարրերի ներմուծումը կարող է նպաստել նաև *ազգային արժեքների* ձևավորմանը: Թեև բուն մաթեմատիկատրամաբանական բանաձևերը, օրենքները, սկզբունքները և այլն որևէ ազգային արժեքի հետ անմիջական կապ չունեն, սակայն ուսուցման ընթացքում դրանց պարզաբանման ու կիրառության նպատակով բերված օրինակները, խնդիրները կամ առաջադրանքները կարող են վերաբերել այնպիսի իրադրությունների, որոնց շարադրանքում անուղղակի ձևով արտացոլվում են ազգային կյանքին և մշակույթին վերաբերող փաստեր, երևույթներ, իրադարձություններ: Բերենք [13, 126] դասագրքից այդ արժեքներին միտված վարժությունների օրինակներ:

550. Առանձնացրեք ասույթները և փոփոխական պարունակող դատողությունները.

ա. Տիգրան Պետրոսյանը եղել է աշխարհի չեմպիոն:

բ. Նա սիրում է Արամ Խաչատրյանի ջութակի կոնցերտը:

գ. Կոմիտասը իմ սիրած երգահանն է:

դ. Հայկը հաղթել է Բելին:

551. Նշեք փոփոխականի արժեք, որի դեպքում «Նա սիրում է հայրենիքը» դատողությունը ճշմարիտ է, և արժեք, որի դեպքում այն կեղծ է:

552. Կազմեք դատողության ժխտումը և որոշեք նրա ճշմարտային արժեքը.

գ. Ջորջ Բայրոնը սովորել է հայերեն:

դ. Վրացական այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը:

Ազգային արժեքների և ազգային արժանապատվության դերի գիտակցմանը նպաստող կարևոր գործոններից մեկն էլ այն է, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում, ուսումնական նյութի շրջանակներում անդրադարձ է արվում նաև հայ տրամաբանական մտքի զարգացման պատմության այս կամ այն դրվագին, լուսաբանվում հայ ժողովրդի ավանդը գիտակրթական մշակույթի ասպարեզում:

Գրականության ցանկ

1. *Ավետիսյան Ս.Հ. (1969).* Մաթեմատիկական տրամաբանության հիմնական տարրեր, Եր., Լույս, 1969 թ., 302 էջ:
2. *Գևորգյան Գ.Գ., Սահակյան Ս.Ս. (2010).* Հանրահաշիվ և մաթեմատիկական անալիզի տարրեր. դասագիրք հանրակրթ. դպր. 11-րդ դասարանի

(բնագիտամաթեմատիկական հոսքի համար), Եր., Տիգրան Մեծ, 2010 թ., 208 էջ:

3. **Գևորգյան Հ.Ա., Բաղդասարյան Վ.Խ. (1994).** Տրամաբանություն, Եր., Լույս 1994 թ., 264 էջ:
4. **Հանրակրթության պետական չափորոշիչ (2011).** //ՀՀ կառավարության 2011 թ. հուլիսի 28-ի N1088-Ն որոշման հավելված//www.aniedu.am.
5. **Հանրակրթության պետական չափորոշիչ (2021).** <https://lib.armedu.am/article/131>
6. **Հանրակրթական առարկայական չափորոշիչ (2023).** Հանրակրթական ուսումնական հաստատություններում «մաթեմատիկա» առարկայի 1-12-րդ դասարանների առարկայական չափորոշիչ, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=176064>
7. **Հարությունեանց Բ. (2000).** Համառոտ տրամաբանություն//Մաթեմատիկական դպրոցում, N1(10), Եր., 2000 թ., 27-32 էջեր:
8. **Միքայելյան Հ.Ս. (2011).** Բարոյական արժեքները և մաթեմատիկայի կրթական ներուժը, Եր., Էդիթ պրինտ, 2011 թ.:
9. **Միքայելյան Հ.Ս. (2015).** Գեղեցիկը, մաթեմատիկական և կրթությունը, մաս 2, Գեղեցիկը և մաթեմատիկայի կրթական ներուժը, Երևան 2015:
10. **Միքայելյան Հ.Ս. (1999).** Հանրահաշիվ 6. դասագիրք հանրակրթ. դպր. 6-րդ դասարանի, Եր., Հայ Էդիթ, 1999 թ., 288 էջ:
11. **Միքայելյան Հ.Ս. (1999).** Հանրահաշիվ 7. դասագիրք հանրակրթ. դպր. 7-րդ դասարանի, Եր., Հայ Էդիթ, 1999 թ., 288 էջ:
12. **Միքայելյան Հ.Ս. (1999).** Հանրահաշիվ 8. դասագիրք հանրակրթ. դպր. 8-րդ դասարանի, Եր., Հայ Էդիթ, 1999 թ., 304 էջ:
13. **Միքայելյան Հ.Ս. (2007).** Հանրահաշիվ 8. դասագիրք հանրակրթ. դպր. 8-րդ դասարանի, Եր., Էդիտ Պրինտ, 2007 թ., 305 էջ:
14. **Միքայելյան Հ.Ս. (2003).** Հանրահաշվի ուսուցման հիմնահարցերը, Եր., Էդիթ Պրինտ, 2003 թ.:
15. **Մկրտչյան Ա.Տ (2016).** Տրամաբանության տարրերի ուսուցման մեթոդիկայի հարցեր// Ուսումնամեթոդական ձեռնարկ մանկավարժական բուհերի մաթեմատիկական մասնագիտությամբ ուսանողների և մաթեմատիկայի ուսուցիչների համար, 2016թ.:
16. **Նիկողոսյի Ս.Ս. (2011).** Պոտապով և ուրիշներ, Հանրահաշիվ. դասագիրք հանրակրթ. դպր. 7-րդ դասարանի, (թարգմանիչ և խմբագիր՝ Ռ. Ավետիսյան), Եր., Անտարես, 2011թ., 208 էջ:
17. **Նիկողոսյի Ս.Ս., Պոտապով Ս.Կ. (2012).** և ուրիշներ, Հանրահաշիվ. դասագիրք հանրակրթ. դպր. 8-րդ դասարանի, (թարգմանիչ և խմբագիր՝ Ռ. Ավետիսյան), Եր., Անտարես, 2012թ., 280 էջ:

18. *Виноградов С.Н., Кузьмин А.Ф. (1954).* Логика, Учебник для средней школы, Изд. 8, Москва, Учпедгиз, 1954 г., 176 с.
19. *Маковельский А.О. (2008).* История логики, Москва, Директ-Медиа, 2008 г., 136 с.
20. *Рыжик В.И. (2003).* 30000 уроков математики: Книга для учителя, М., Просвещение, 2003 г.
21. *Саранцев Г.И. (2002).* Методика обучения математике в средней школе, Москва, Просвещение, 2002 г., 226 с.
22. *Черкасов Р.С., Столяр А.А. (1985).* Методика преподавания математики в средней школе, Москва, Просвещение, 1985 г., 336 с.

**ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԻ ՆԵՐԱՌՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ
ԴՊՐՈՑԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ**
Մկրտչյան Արաքսյա Տիգրանի

Ամփոփում: Աշխատանքում դիտարկվում է հանրակրթական դպրոցի մաթեմատիկայի դասընթացում տրամաբանության տարրերի ներառման հինախնդիրը: Ներկայացվում են տրամաբանության առաջացման և ուսուցման պատմությունը. դպրոցական ծրագրերում և մաթեմատիկայի դասընթացում տրամաբանության տարրերի ներառման խնդիրը մինչանկախացման և անկախացման շրջանի ՀՀ կրթական համակարգերում: Ցույց է տրվում տրամաբանության տարրերի ուսումնական նշանակությունը մաթեմատիկայի ներառարկայական կապերի ապահովման, սովորողների լեզվատրամաբանական մտածողության զարգացման, թեմաների հիմնավոր յուրացման և սերտողական ուսուցման բացառման տեսանկյուններից: Ներկայացվում է նաև տրամաբանության տարրերի ուսուցման դաստիարակչական ներուժը, նշանակությունը ճշմարտական, բարոյական, գեղագիտական, ազգային, համամարդկային և այլ արժեքների ձևավորման ուղղությամբ և մաթեմատիկայի դպրոցական դասընթացում տրամաբանության տարրերի ուսուցման հայրենական հարուստ փորձը: Դիտարկվում է նաև հանրակրթության նոր չափորոշիչների ընձեռած հնարավորությունները հիմնախնդրի լուծման ուղղությամբ, վեր է հանվում իրականացված չափորոշիչային փոփոխությունների ազդեցությունը սովորողների տրամաբանական մտածողության զարգացման և ուսումնական գործընթացի վրա հնարավոր այլ նեգատիվ ազդեցությունների տեսանկյունից: Այդ տեսակետից հատուկ քննարկվում է մաթեմատիկայի չափորոշիչում ապացուցման պահանջի ակնհայտ թուլացումը, դրա բացասական ազդեցությունը սովորողների տրամաբանական մտածողության և փաստարկման մշակույթի ձևավորման վրա:

Բանալի բառեր: Մաթեմատիկական կրթություն, տրամաբանության տարրեր, լեզվամտածողության զարգացում, արժեքների ձևավորում:

ПРОБЛЕМА ВКЛЮЧЕНИЯ ЭЛЕМЕНТОВ ЛОГИКИ В ШКОЛЬНЫЙ КУРС МАТЕМАТИКИ

Мкртчян Аракся Тиграновна

Резюме. В статье рассматривается проблема включения элементов логики в курс математики общеобразовательной школы. Представляется история происхождения и преподавания логики: проблема включения элементов логики в школьные программы и курсы математики в образовательных системах РА до- и постнезависимого периода. Демонстрируется воспитательная значимость элементов логики с позиций обеспечения внутрипредметных связей математики, развития лингвологического мышления учащихся, прочного усвоения тем, исключения механического заучивания. Также демонстрируется воспитательный потенциал обучения элементам логики, его значение в направлении формирования истинных, нравственных, эстетических, национальных, общечеловеческих и других ценностей и богатый отечественный опыт преподавания элементов логики в школьном курсе математики. Также рассматриваются возможности, предоставляемые новыми стандартами общего образования в направлении решения проблемы, выделяются влияния от реализованных изменений стандартов с точки зрения развития логического мышления учащихся и других возможных негативных последствий для учебного процесса. С этой точки зрения специально обсуждается очевидное ослабление требования доказательства в стандарте по математике, его негативное влияние на логическое мышление учащихся и формирование культуры аргументации.

Ключевые слова. Математическое образование, элементы логики, развитие лингвологического мышления, формирование ценностей.

THE ISSUE OF INCORPORATING ELEMENTS OF LOGIC INTO THE SCHOOL MATHEMATICS CURRICULUM

Mkrtchyan Araksia Tigran

Summary. This article addresses the problem of integrating elements of logic into the curriculum of mathematics in general education schools. It presents the history of the origin and teaching of logic, discusses the problem of incorporating elements of logic into school programs and mathematics courses in the educational systems of the Republic of Armenia during pre- and post-independence periods. The educational significance of logical elements is demonstrated in terms of ensuring interdisciplinary connections in mathematics, fostering linguistic-logical thinking among students, ensuring solid comprehension of topics, and eliminating mechanical memorization. The educational potential of teaching logical elements is also highlighted, emphasizing its role in shaping true, moral, aesthetic, national, universal, and other values,

drawing on the rich domestic experience of teaching logical elements in the school mathematics curriculum. Additionally, the article examines the opportunities provided by new general education standards to address the problem, identifies the impacts of implemented changes in standards on the development of students' logical thinking, and discusses potential negative consequences for the educational process. From this perspective, the article specifically discusses the apparent relaxation of proof requirements in the mathematics standard, its adverse effects on students' logical thinking, and the formation of argumentation culture.

Key words: mathematical education, elements of logic, development of linguistic-logical thinking, formation of values.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԴԱՍԸՆԹԱՑՈՒՄ
ՍՏՈՒԱՍՏԻԿԱԿԱՆ ՆՅՈՒԹԻ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ORCID 0009-0008-7911-7610

Մինասյան Անժելա Իսրայելի

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, ՀՀ



Մինասյան Ա. Ի.

մանկ. գիտ. թեկնածու, դասախոս

Ներածություն

Անցած դարում գիտության մեջ հայտնվեցին ստոխաստիկական (հավանականությունների տեսություն, մաթեմատիկական վիճակագրություն, կոմբինատորիկա և պատահական գործընթացներ) գաղափարների, մեթոդների կիրառություններ, որոնք թույլ են տալիս հասկանալ և բացատրել ստոխաստիկական օրինաչափությունների բազմազանությունը, շրջակա աշխարհի բազմաթիվ երևույթների պատահական բնույթը, բնական և հասարակական բազմաբնույթ գործընթացներում ստոխաստիկական մոդելների կիրառման հնարավորությունները: Ներկայումս հավանականային հայեցակարգերը և պատկերացումները թափանցելով մարդկային գործունեության ամենատարբեր ոլորտներ՝ դարձել են ընդհանուր մաթեմատիկական մշակույթի անբաժանելի մասը [10, էջ 82]: Հավանականային-վիճակագրական պատկերացումները դարձել են ժամանակակից գիտության հիմքը ձևավորող հիմնական և ինտեգրող գաղափարներից [15]: Ստոխաստիկական աշխարհաճանաչողության, աշխարհընկալման հատուկ ձև է, բնության և այն ուսումնասիրող գիտությունների համար հետազոտման օրինաչափությունների ստացման, հաստատման և հավաստման միջոց:

Ստոխաստիկական գրագիտության, մշակույթի դերին և նշանակությանն անդրադարձել են մի շարք անվանի գիտնականներ. Ա. Ն. Կոլմոգորով, Ա. Յա. Խինչին, Բ. Վ. Գնեդենկո, Ս. Պ. Վինոգրադով, Ի. Մ. Յագլով, Ի. Ի. Կիկոյին, Դ. Կ. Կրանիչ, Գ. Լ.

Լուկանկին, Ա. Ի. Մարկուշնիչ, Վ. Վ. Ֆիրսով, Ջ. Մ. Ուոթսոն և այլք:

Հաշվի առնելով ստոխաստիկայի ողջ կարևորությունը և հնարավորությունները՝ կրթական բարեփոխումների մեր օրերում ընդգծվում է ժամանակակից կրթական հայեցակարգերում, մաթեմատիկական կրթության բովանդակության մեջ, դպրոցական կրթական համակարգում պատահականության հայեցակարգերի ներառման անհրաժեշտությունը և ընդլայնման կարևորությունը: Այդպիսի մոտեցման համար հիմք է ծառայում այն վիթխարի ներուժը, որն ունի ստոխաստիկան՝ որպես ճանաչողական և կիրառական լայն գործառնություններ ունեցող գիտություն:

Ներկայումս ՀՀ-ում տեղի է ունենում դպրոցական ծրագրերում ստոխաստիկայի տարրերի ընդլայնման գործընթացը: Ըստ կրթական նոր չափորոշիչների՝ հանրակրթության մեջ ստոխաստիկայի տարրերն արդեն իսկ իրենց ուրույն տեղն ունեն: Սակայն, հակառակ բազմաթիվ գիտական մշակումների, հարուստ ու բազմաբնույթ միջազգային փորձի՝ մեր դպրոցներում ստոխաստիկայի ուսուցման մեթոդների, ձևերի հետ կապված զանգվածային քննարկումներ դեռևս չեն իրականացվել: Ուստի, չափազանց կարևորում ենք ստոխաստիկայի ուսուցման մակարդակի և որակի բարձրացման հարցը:

Վստահությամբ կարելի է ասել, որ հավանականային-վիճակագրական գծի ներառումը դպրոցական ծրագրեր պատահականություն չէ, այլ բնական ու սոցիալ-տնտեսական բարդ երևույթների ուսումնասիրության անհրաժեշտության ինքնատիպ պատասխան է, ինչի վերաբերյալ նախորդ մաթեմատիկական ապարատն ու մեթոդները բավարար արդյունք չեն տվել՝ միայն մասամբ արտացոլելով բնական և սոցիալական բարդ երևույթների օբյեկտիվ օրինաչափությունները: Ստոխաստիկան, լինելով գիտահետազոտական գործունեության համար կարևորագույն գործիքներից մեկը, պետք է բացահայտվի սովորողների համար: Հավանականային-վիճակագրական պատկերացումները պետք է դառնան սովորողների աշխարհայացքի ձևավորման անբաժանելի բաղադրիչը և ապահովեն, որ նրանք հասկանան ստոխաստիկական օրինաչափությունների բազմազանությունը, բնության և հասարակության մեջ բազմաբնույթ գործընթացներում ստոխաստիկական մոդելների կիրառման հնարավորությունները:

Ինչպես նշում է Բ. Վ. Գնեդենկոն. «Դպրոցն ավարտելով՝ շրջանավարտները պետք է հստակ գիտակցեն, որ բնության մեջ և հասարակական կյանքում ոչ բոլոր գործընթացներն են կրում զուտ դետերմինիստական բնույթ, որ նման մոտեցումն իրականության առաջնային և պարզագույն մոտարկումն է: Ճանաչողության հաջորդ քայլը դա վիճակագրական մոտեցումն է: Դրանում է կայանում հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդաբանական նշանակությունը: Մենք իրավունք չունենք մեր սովորողներին զրկել կյանքի, բնության, տեխնիկայի, հումանիտար հետազոտությունների նկատմամբ այս առավել լայն հայացքներից՝ թողնելով նրանց 18-րդ դարի մեթոդաբանական պատկերացումների մակարդակում» [5, էջ 4]:

Հավանականությունների տեսությանը և մաթեմատիկական վիճակագրությանը

նվիրված նյութերն աչքի են ընկնում ինքնատիպությամբ, հավանականային մտածողության ձևավորման ու զարգացման եզակի հնարավորություններով, գեղագիտական յուրօրինակ գրավչությամբ և մի շարք այլ առանձնահատկություններով, որոնց բացահայտումն ու հաշվառումը առանձնահատուկ դեր կարող են ունենալ ստոխաստիկայի ուսուցման գործընթացի և ընդհանրապես, դպրոցական մաթեմատիկական կրթության որակի բարձրացման և կատարելագործման հարցում: Մեր փորձը ցույց է տալիս, որ ստոխաստիկական նյութի բովանդակային առանձնահատկությունները նպաստում են սովորողների հետաքրքրության և ակտիվության մեծացմանը, ուսուցման արդյունավետության բարձրացմանը:

Անշուշտ, չափազանց կարևոր է ստոխաստիկայի ուսուցման գործընթացում տեսության խիստ տրամաբանական շարադրումը: Սակայն մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ ստոխաստիկական նյութի ներկայացման միայն ձևական-տրամաբանական կողմը բավարար չէ այն ընկալելու համար: Ընկալման գործընթացի վրա ազդում են նաև մի շարք հոգեբանամանկավարժական գործոններ: Հետևաբար, ուսուցման գործընթացում պետք է հաշվի առնել ինչպես ստոխաստիկայի (հասկացություններ, թեորեմներ և այլն), այնպես էլ սովորողների հոգեբանական և անհատական առանձնահատկությունները (բնավորությունը, մտային գործունեության առանձնահատկությունները, հույզերը, զգացողությունները և այն ամենը ինչն ազդում է դրա վրա): Ուսուցման գործընթացում շեշտը պետք է դնել ոչ թե ինչպիսի՞ն պետք է լինի սովորողը, ի՞նչ պետք է իմանա, ի՞նչ պետք է հիշի, այլ մենք պետք է մեր առջև տեսնենք կենդանի էակի, իր գիտելիքներով, հիշողությամբ, հետաքրքրություններով ու հնարավորություններով: Պարզվում է, որ իրականում հավանականային-վիճակագրական նյութի ընկալման վրա հենց այդ հոգեկան գործոններն են որոշիչ կերպով ազդում:

Մտածողության արդյունավետ զարգացումը կախված է առաջին հերթին սովորողի պահանջմունքադրդապատճառային ոլորտից: Փորձով հաստատված է, որ ինքնուրույն որոնման արդյունքում ձեռք բերված գիտելիքներն առավել արագ են ընկալվում և առավել լավ են հիշվում, քան գիտակցության մեջ պարտադրաբար ներմուծված գիտելիքները: Դրա հետ մեկտեղ միևնույն մարդը դատում է ճիշտ կամ սխալ, արագ կամ դանդաղ, տրամաբանորեն կամ ոչ տրամաբանորեն. կախված է ոչ միայն նրա ընդունակություններից, այլ նաև այն բանից, թե նա ինչպես է տրամադրված, հանգիստ է, թե անհանգիստ, վստահ է իր ուժերի նկատմամբ, թե ոչ և այլն: Այսպիսով, կարելի է ասել, որ մարդու ուսումնական հնարավորությունները, նրա տրամաբանական մտածողության մակարդակն անընդհատ փոփոխվում են և կախված են հենց նշված զուտ հոգեբանական գործոններից: Եվ, ուրեմն, մաթեմատիկական գիտելիքների արդյունավետ ուսուցմանը և դրանց արդյունավետ յուրացմանը միտված ստոխաստիկայի դասավանդման գործընթացը կազմակերպելիս պետք է հաշվի առնել այդ գործոնները, քանի որ դրանցից է կախված սովորողների մտածական գործունեությունը և մտածողության զարգացումը: Եվ, հետևաբար, հանրակրթության մաթեմատիկայի դասընթացի ստոխաստիկական նյութի ընկալման հոգեբանամանկավարժական տեսանկյունից չափազանց կարևոր է

ապահովել սովորողների դրդապատճառային ոլորտի խթանումը:

Կարծում ենք, որ վերոնշյալ խնդիրների հաղթահարման հարցում կարևոր դեր կարող է խաղալ ստոխաստիկայի, դրա ուսուցման ձևերի և տեխնոլոգիաների, ուսումնական նյութի՝ հասկացությունների, թեորեմների, խնդիրների ու դրանց լուծման առանձնահատկությունների բացահայտումն ու հաշվառումը:

Ստոխաստիկական նյութը և սովորողների ստոխաստիկական մտածողությունը

Հավանականությունների տեսությանը և մաթեմատիկական վիճակագրությանը նվիրված նյութերն աչքի են ընկնում հավանականային մտածողության ձևավորման ու զարգացման բացառիկ ու եզակի հնարավորություններով: Հավանականային մոդելների հետ աշխատանքի, ստոխաստիկական խնդիրների և հիմնախնդիրների ըմբռնման ու գիտակցման արդյունքում ձևավորվում և զարգանում է սովորողների հավանականային մտածողությունը, ինչը թույլ է տալիս հասկանալ շրջապատող աշխարհի հավանականային բնույթը, զարգացնում է նրանց անհատականությունը:


Կ. Կ. Պլատոնովը նկատում է, որ «Հավանականային մտածողություն» տերմինը և հասկացությունը 1945 թ. ներմուծել է խորհրդային հոգեբան Բ. Մ. Տեպլով: Այն մտածողության տեսակ է, որի կառուցվածքի մեջ են մտնում սպասվելիք իրադարձությունների հավանականության աստիճանի մասին դատողություններ [9]:

Մանկավարժական և հոգեբանական գրականության մեջ օգտագործում են նաև նշված հասկացության հոմանիշները՝ «հավանականային-վիճակագրական», «վիճակագրական», «ստոխաստիկական» մտածողություն:

Հիմնվելով հավանականային մտածողության Բ.Մ. Տեպլովի կողմից առաջարկված սահմանման վրա և հաշվի առնելով ստոխաստիկայի ուսուցման հետ սերտորեն կապված մտածողության քննադատական բնույթը՝ Ս. Վ. Շերբատիխը հետազայում տվել է հավանականային մտածողության հետևյալ սահմանումը. «Ստոխաստիկական մտածողությունը մտածողության հատուկ տեսակ է, որը թույլ է տալիս դատողություններ անել և եզրահանգումներ կատարել այս կամ այն իրադարձության տեղի ունենալու հնարավորության, դրանց հավանականության մասին, քննադատաբար գնահատել պատահականության աշխարհով ծնված իրավիճակը, դրանցից դուրս գալու էլքեր գտնել և կանխատեսել սեփական վարքն ապագայում» [12, էջ 149]:

Հավանականային մտածողության նկարագրման մեկ այլ մոտեցում է առաջարկել Ս. Ն. Դվորյատկինան: Հեղինակը, տարբերակելով մտածողության տրամաբանական և ինտուիտիվ տեսակները, ենթադրում է, որ հավանականային մտածողությունը միջանկյալ տեղ է զբաղեցնում վերջիններիս միջև: Ըստ Ս. Ն. Դվորյատկինայի՝ հավանականային մտածողությունը առանձնահատուկ հոգեբանական գործընթաց է, որը միավորում է մտածողության ինչպես տրամաբանական, այնպես էլ ինտուիտիվ բաղադրիչները՝ միա-

Ժամանակ ձեռք բերելով նոր որակներ և իրականացվելով այլ հոգեբանական մեխանիզմներով: Գործելով տրամաբանության և ինտուիցիայի հիման վրա ստեղծված պատկերացումներով՝ հավանականային մտածողությունը գնահատում է դրանց հավանականությունը և թույլ է տալիս ավելի ճիշտ որոշումներ կայացնել [7, էջ 19]: Դվորյատկինայի այդ մոտեցումը հստակ երևում է նկար 1-ում, որտեղ ներկայացված է տրամաբանական և ինտուիտիվ մտածողությունների համեմատության մեջ հավանականային մտածողության մոդելը:



Նկ. 1. Տրամաբանական, ինտուիտիվ և հավանականային մտածողությունների համեմատության մոդել ըստ Ս. Ն. Դվորյատկինայի

Տարբեր աղբյուրներում հավանականային մտածողությանը վերագրվում է ինչպես մտածողության ոճ, այնպես էլ՝ տեսակ: Մտածողության հավանականային ոճում որպես մտածողության հիմնական որակներ առանձնացվում են համեմատումը, ընդհանրացումը և վերացարկումը [14]:

Առանձնացվում են հավանականային մտածողության երեք հիմնական բաղադրիչներ՝ *տրամաբանական, կոմբինատորային և հավանականային-վիճակագրական:*

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի հավանականային-վիճակագրական ուղղվածությունը կոչված է ձևավորել ներկայիս հարափոփոխ աշխարհում մտածող և գործող անհատ: Բացի այդ, ինչպես նկատում է Վ. Դ. Սեյդուտինը, նշված առանձնահատկությունն առաջադրում է դասավանդման առանձնահատուկ մեթոդիկայի կիրառում՝ ուղղված ոչ դետերմինացված պատկերացումների ձևավորմանը և հավանականային-վիճակագրական մտածողության զարգացմանը [8]:

Սովորողների հավանականային մտածողության ձևավորման հարցում ստոխաստիկայի դերին և նշանակությանը անդրադարձել են այնպիսի անվանի գիտնականներ, ինչպիսիք են Ա. Ն. Կոլմոգորովը, Բ. Վ. Գնեդենկոն, Ա. Յա. Խինչինը, Ի. Ս. Յագլոմը, Վ. Դ. Սեյդուտինը Դ. Վ. Մանսիչը, Ս. Վ. Շերբատիխը, Գ. Ս. Եվդոկիմովան, Է. Ֆիշերինը, Ժ. Պիաժեն, Բ. Բնեդեկերը, Ն. Մ. Սիլը, Ջ. Մ. Շոգենսին, Ռ. Բիլերը և այլք: Նրանց հետազոտությունների արդյունքները վկայում են, որ սովորողների հավանականային մտածողության, որն անհրաժեշտ է յուրաքանչյուր մարդու, ով ապրում է ժամանակակից

բարդ ու հարափոփոխ հասարակությունում, ձևավորման միջոցը ստոխաստիկական խնդիրների համակարգն է: Ընդ որում, Դ. Վ. Մաննիչն առաջարկում է վերջինիս ձևավորման հիմնախնդիրը դնել հետևյալ կերպ. հանրակրթական դպրոցի յուրաքանչյուր սովորողի անհրաժեշտ է տիրապետել ոչ միայն ստոխաստիկական գիտելիքների որոշակի ծավալի, այլև կարողանալ կիրառել այդ գիտելիքները այն դեպքերում, երբ մարդը հանդիպում է ինչ-որ երևույթների հաճախության: Նման դեպքերում աշակերտը պետք է կարողանա ստացված տեղեկատվությունից ինդուկտիվ եզրահանգումներ կատարել:

Հոգեբանների (Ա. Վ. Բրուշլինսկի, Բ. Ինհելդեր, Ժ. Պիաժե, Ե. Ֆիշբեյն, Ի. Ս. Ֆեինգենբերգ և այլք)՝ հետազոտությունները վկայում են, որ մարդն ի սկզբանե պրակտիկորեն ունակ չէ տալ հավանական գնահատական կամ գիտակցել և ճիշտ մեկնաբանել ստոխաստիկական բնույթի տեղեկատվությունը:

Մանկավարժական պրակտիկան ցույց է տալիս, որ հավանականային-վիճակագրական խնդիրների լուծման գործընթացը սովորողների մոտ մեծ դժվարություններ է առաջացնում: Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ իրենց բնույթով այս խնդիրները տարբերվում են մաթեմատիկական մյուս խնդիրներից, խնդիրներում հանդիպող հավանականային վիճակագրական հասկացությունները ազատորեն չեն օգտագործվում սովորողների մտածողության մեջ, ավելին, մաթեմատիկական խնդիրների լուծման իրենց հայտնի մեթոդները, որպես կանոն, գրեթե պիտանի չեն հավանականային-վիճակագրական խնդիրների լուծման համար:

Ինչպես նկատում է Ե. Ա. Բունիմովիչը՝ նույնիսկ մաթեմատիկայի այլ բաժինների լավ իմացությունն ու ըմբռնումը չի ապահովում սովորողների հավանականային մտածողության զարգացումը [3, էջ 53]:

Հավանականային մտածողության ձևավորման արդյունավետ ճանապարհներ որոնելու ուղղությամբ կատարված հետազոտությունների շարքում նշանակալի են Վ. Դ. Սելյուտինի հետազոտությունները [8]: Ըստ հեղինակի՝ հավանականային-վիճակագրական պատկերացումների մեթոդաբանական հիմքը պատահականի և անհրաժեշտի դիալեկտիկական միասնության մասին ուսմունքն է: Նա հավանականային մտածողության ձևավորման հիմքում դնում է նախնական հավանականային-վիճակագրական պատկերացումների ձևավորումը՝ գտնելով, որ հավանականությունների տեսության և վիճակագրության նախնական հասկացությունների հաջող յուրացման համար անհրաժեշտ է շրջապատող աշխարհի հավանականային պատկերի մասին պատկերացումների պաշար՝ *նախնական վիճակագրական պատկերացումներ*:

Իսկ այն հարցին, թե ինչպե՞ս է իրականացվում այդ նախնական պատկերացումների ձևավորման գործընթացը. այն բնական գործընթաց է, թե՞ հատուկ կազմակերպված ուսուցման արդյունք, իրենց հետազոտություններում փորձել են պատասխանել մի շարք հոգեբաններ, մեթոդիստ-մանկավարժներ:

Հավանականային մտածողության զարգացման հիմնախնդիրը դիտարկելով կոգնիտիվ զարգացման ընդհանուր համատեքստում, որտեղ գերակշռող դիրք ունեն Ժ.

Պիաժեի և Լ. Վիգոտսկու իրար փոխընդհանուր տեսությունները, հեղինակներից շատերը գալիս են այն եզրահանգման, որ պատկերացումների ձևավորումը տեղի է ունենում ոչ թե բնականորեն, այլ որոշակի գործունեության գործընթացում:

Ուսուցման և զարգացման հարաբերակցության խնդրի հետ կապված ռուս հոգեբան Լ. Վիգոտսկու տեսության էությունն արտահայտվում է նրանով, որ ուսուցման մեջ առաջնահերթությունը տրվում է զարգացմանը: Նման մոտեցումը երեխային նպատակաուղղում է ոչ թե այս կամ այն հասկացության յուրացմանը, այլ նրա մտածողության մակարդակի «բարձրացմանը»՝ գիտական հասկացությունների համակարգի հատուկ կառուցված ուսուցման օգնությամբ: Բայց այս մոտեցմամբ հասկացությունների յուրացումը մի շարք դեպքերում իրագործվում է ձևականորեն:

Իր հերթին շվեյցարացի հոգեբան Ժ. Պիաժեն, չհամաձայնվելով Լ. Վիգոտսկու տեսակետի հետ՝ այն կարծիքին է, որ կարևոր նշանակություն ունի հենց երեխայի սեփական ակտիվությունը: Նա պնդում է, որ զարգացող ուսուցման դերը երեխայի արդեն իսկ ունեցած ճանաչողական կառույցների խթանումն է:

Այս համատեքստում Վ. Դ. Մեյլուտինը նշում է, որ նախնական հավանականային-վիճակագրական պատկերացումները ձևավորվում են պատահականության մասին աշակերտների առօրյա, չհամակարգված պատկերացումների հիման վրա: Հավանականային-վիճակագրական նյութի հատուկ կազմակերպված ուսուցումը կոչված է ընդհանրացնելու, համակարգելու սովորողների արդեն իսկ ունեցած թերի, կցկտուր, ինտուիտիվ պատկերացումները [8, էջ 30-31]:

Վ. Ա. Բոլտոյուկն ընդգծում է, որ օբյեկտիվ իրականության առանձնահատկություններին համապատասխան հավանականային-վիճակագրական պատկերացումների ձևավորումը տեղի է ունենում ոչ տարերայնորեն, այլ նպատակաուղղված ուսուցման արդյունքում, որի հիմքերը ձևավորում են ուսուցման հոգեբանական հայեցակարգերը:

Այսպիսով՝ այս ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքները հիմք է տալիս ասելու, որ մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հավանականային-վիճակագրական պատկերացումների, հավանականային մտածողության ձևավորումն ու զարգացումն իրականացվում է ստոխաստիկայի փուլ առ փուլ, նպատակաուղղված, համակարգված, երկարատև, սովորողների տարիքային առանձնահատկություններին համապատասխան ուսուցման արդյունքում՝ ոչ միայն տեսական, այլ նաև գործնական առումով:

Ստոխաստիկական նյութը կիրառական միջավայրում

Ստոխաստիկական նյութի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ դրա կիրառական բնույթն է: Ստոխաստիկական հայեցակարգերն արմատապես կապված են բնագիտության և տեխնիկայի զարգացման հիմնախնդիրների հետ: Աշխարհի փիլիսոփայական ընկալումը, դրա ընդհանուր օրինաչափություններն ու գիտական հայեցակարգն անհնար է պատկերացնել առանց ստոխաստիկայի: Նշվում է, որ

պատահականության գոյության հերքումը բերում է մեր աշխարհընկալման սահմանափակմանը: Դեռևս 1896 թ. Ա. Պուանկարեն գրել է. «Հավանականության հաշվումը, ընդհանուր առմամբ, մեզ սովորեցնում է մի բան. իմանալ, որ մենք ոչինչ չգիտենք» [11, էջ 127]:

Հավանականային-վիճակագրական հասկացությունները սերտ կապված են շրջապատող աշխարհի հետ: Ստոխաստիկայի տեսական գաղափարները, մեթոդներն ու արդյունքները կիրառվում են տնտեսագիտության, արտադրության կազմակերպման, բժշկության, սոցիոլոգիայի, հոգեբանության, լեզվաբանության, կապի մեջ, արտակարգ իրավիճակներում, բնագիտական ու տեխնիկական գիտություններում: Եվ, ուրեմն, ստոխաստիկական նյութը շարադրելիս՝ անհրաժեշտ է անընդհատ լուսաբանել հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդների և գաղափարների դերը, լայն կիրառությունները ողջ բնագիտական և սոցիալ-տնտեսական բնագավառներում: Դրանով իսկ կապահովենք, որ դպրոցականները, ովքեր ուղղակիորեն չեն հետաքրքրվում ծրագրային նյութով, հասկանան դասի ժամանակ ուսումնասիրվող երևույթների գործնական նշանակությունը, ինչը, ըստ էության, շատ կարևոր է հումանիտար մտածողությամբ սովորողների համար: Փորձով հաստատված է, որ սովորողների ուշադրությունը ակամայից կենտրոնանում է առարկայի վրա այն դեպքում, երբ խոսքը ստացված գիտելիքները պրակտիկայում կիրառելու մասին է:

Մեր օրերում հավանականությունների տեսությունը կիրառական գիտությունների շարքում օգտագործման տեսանկյունից առաջատարներից է. «չկա ոչ մի բնական գիտություն, որում այս կամ այն կերպ չեն օգտագործվում հավանականությունների տեսության մեթոդները» [4, էջ 17]:

Մաթեմատիկական վիճակագրության մեթոդներն այսօր արդեն լայն կիրառություն ունեն տնտեսագիտության, սոցիոլոգիայի, հոգեբանության, բժշկության, քիմիայի, կենսաբանության, ֆիզիկայի մեջ և բազմաթիվ այլ բնագավառներում: Հավանականությունների տեսությունն ու մաթեմատիկական վիճակագրությունը կարևորագույն դեր ունեն նաև արտակարգ իրավիճակների հետ կապված խնդիրներում:

Ժամանակակից քիմիայի շատ հասկացություններ պահանջում են հավանականային-վիճակագրական պատկերացումներ: Օրինակ՝ դինամիկական հավասարակշռության, քիմիական ռեակցիաների բնույթն անհնար է հասկանալ առանց վիճակագրական պատկերացումների:

Ողջ տեսական գենետիկան հիմնված է հավանականային-վիճակագրական օրենքների վրա: Այսպես, օրինակ, ավստրիացի գիտնական Գ. Մենդելը կենսաբանական մի շարք փաստերը կարողացավ հիմնավորել մաթեմատիկական օրինաչափություններով: Նա կարողացավ բացատրել բույսերի ժառանգական հատկանիշների փոփոխության և փոխանցման օրինաչափությունները: Ժամանակակից գենետիկայի հիմքում ընկած Մենդելի երեք հիմնական օրենքներն իմաստավորվում են հավանականությունների տեսության հիմնական դրույթների և ընդհանրապես, ստոխաստիկական քննարկումների օգնությամբ [6]: Բ. Գնեդենկոն նշում է, որ

կենսաբանական այնպիսի հիմնախնդիրների ուսուցումը, ինչպիսիք են, օրինակ, բնաշխարհում կենդանիների բնակեցումը, ժառանգական հատկությունների փոխանցումը, գիշատչի և որսի փոխհարաբերությունները, գրգռվածության, հուզմունքի փոխանցումը պահանջում են հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության լավ իմացություն [5, էջ 3]: Այսօր արդեն հավանականությունների տեսության մեթոդները դարձել են գենետիկական հաշվարկների հիմքը: Դրանք օգտագործվում են նաև կենսաբանական պոպուլյացիաների զարգացման վերահսկման ու ուսումնասիրման գործում: Իսկ ահա ընդհանուր կենսաբանության այնպիսի հարցեր, ինչպիսիք են բնական ընտրության ճանապարհով էվոլյուցիայի, ընտրության ձևերի, բնակչության գենետիկայի հարցերը չեն կարող հասկանալի լինել առանց վիճակագրական օրինաչափությունների մասին պատկերացումների [5]:

Աստղագիտությունն իր տարբեր ոլորտներում լայնորեն օգտագործում է հավանականային-վիճակագրական ապարատն ու պատկերացումները: Տարածության մեջ նյութի բաշխման հետազոտությունները, տիեզերական մասնիկների խմբերի ուսումնասիրությունները և շատ այլ հարցեր ստոխաստիկական պատկերացումների համակարգված օգտագործման կարիքն ունեն [5, էջ 3]:

Համանման միտում է դիտվում նաև հումանիտար գիտություններում:

Հետազոտության հավանականային-վիճակագրական մեթոդները ներգրավվել են պատմական հետազոտությունների մեջ, հատկապես, հնագիտության մեջ:

Ներկայումս լեզվաբանական հաշվարկներ կատարելու համար լայնորեն կիրառվում են հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդները: Գրառումների կոդավորումը և վերծանումը, բառերի և տառերի հաճախությունների ուսումնասիրությունը հիմնված են լեզվի վիճակագրական օրինաչափությունների օգտագործման վրա: Այս մեթոդները վաղուց արդեն օգտագործվում են գրական կեղծիքները պարզելու և հեղինակային իրավունքները պաշտպանելու համար [5, էջ 3-4]:

Հանրահայտ է տնտեսագիտության և մաթեմատիկական վիճակագրության խորը կապը: Առանց բազմակողմանի վիճակագրական հետազոտությունների հնարավոր չէ հուսալիորեն պլանավորել տնտեսական գործունեությունը: Ցանկացած արտադրություն պլանավորելիս՝ ուղղակիորեն գործ ենք ունենում զանգվածային պահանջարկի պատահական փոփոխությունների հետ, որոնք հնարավոր է կանխատեսել անցյալի փորձով: Պետական եկամուտների ավելացման և միաժամանակ քաղաքացիների կենսամակարդակի բարձրացման, բնակչության թվի, նրա կարիքների, զբաղվածության փոփոխությունների կանխատեսման հարցերի դիտարկումը պահանջում է մանրակրկիտ վիճակագրական վերլուծությունների իրականացում և դրա հիման վրա ճիշտ եզրակացությունների կատարում [5, էջ 4]:

Ներկայումս ոչ մի փորձարարական աշխատանք (կենսաբանական, քիմիական, սոցիոլոգիական, հոգեբանական, մանկավարժական, տնտեսագիտական և այլն) լուրջ չի համարվում, եթե վիճակագրորեն հիմնավորված չէ կատարված գիտափորձերի ծավալը և

բերված չէ ստացված արդյունքների վստահելի գնահատական:

Հոգեբանների և մանկավարժ-գիտնականների հետազոտությունների արդյունքների համաձայն՝ ներկայումս ուսուցման գործընթացի նկատմամբ, ընդհանուր առմամբ, դիտվում է հետաքրքրության անկում: Մաթեմատիկայի առումով նկատենք, որ աշակերտի մոտ դպրոցական դասընթացում ուսումնասիրվող օբյեկտների և շրջապատող աշխարհի միջև անթափանց պատնեշի տպավորություն է ստեղծվում: Ավելին, ավագ դպրոցում հումանիտար հոսքերի աշակերտները, ըստ էության, անտեսում են մաթեմատիկա առարկան: Կարծում ենք, որ այդ խնդիրների հաղթահարման հիմնական ճանապարհներից մեկը մաթեմատիկայի ուսուցման գործընթացը դեպի գործնական-կիրառական դաշտ նպատակաուղղելն է: Մեր խորին համոզմամբ, ստոխաստիկայի դերը ուսուցման գործընթացի մոտիվացիայի հարցում առանձնակի կարևոր է: Ստոխաստիկական նյութը, որի ուսուցումն անհնար է առանց իրական աշխարհում դիտվող գործընթացների, առանց աշակերտի իրական կյանքի փորձի վրա հենվելու, թույլ կտա հաշվի առնել սովորողների հետաքրքրությունները, ինչը կնպաստի մաթեմատիկայի նկատմամբ վերաբերմունքի բարելավմանը, մաթեմատիկայից չառաջադիմող աշակերտների մոտ առարկայի հանդեպ հետաքրքրություն ձևավորմանը, միևնույն ժամանակ կընդլայնի ձեռք բերած գիտելիքները կիրառելու հնարավորությունները:

Վ.Վ. Ֆիրսովն իր թեկնածուական ատենախոսությունում առաջ է քաշում և ապացուցում է վարկածն առ այն, որ դպրոցում հավանականությունների տեսության դասընթացի հենց կիրառական ուղղվածություն է հանդես գալիս որպես ուսուցման նպատակներին հասնելու անհրաժեշտ պայման [10, էջ 13]: Վ.Դ. Մեյլուտինը ստոխաստիկայի ուսուցման գործընթացում որպես ուսուցիչների մեթոդական պատրաստվածության հիմնական բաղադրիչ առանձնացնում է կիրառականը՝ ուղղված իրական աշխարհի հետ հավանականային մոդելների սերտ կապի ստեղծմանը, մոդելների կառուցման և մեկնաբանման գործընթացի կազմակերպմանը՝ որպես գործունեության առաջատար ձև [8, էջ 65]:

Այսպիսով՝ ուսուցման գործընթացում շատ կարևոր և անհրաժեշտ է առավելագույնս օգտագործել ստոխաստիկայի կիրառական բնույթը՝ ընդլայնելով երեխայի մտահորիզոնը մաթեմատիկայի և նրա օգտակար լինելու մասին:

Ստոխաստիկական նյութի ներուժը միջառարկայական կապերի ոլորտում

Մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ մաթեմատիկայի դպրոցական դասընթացի հավանականային-վիճակագրական գիծը լայնամասշտաբ կապեր ունի դպրոցական այլ դասընթացների հետ: *Այն առանձնահատուկ է իր ներառարկայական և միջառարկայական կապերի ուժով:* Ստոխաստիկական կարող է հանդես գալ որպես հանրակրթական դպրոցի մի շարք առարկաներն ինտեգրող՝ կիրառությունների համատեքստում: Ինտեգրման շրջանակի մեջ ներառելով ֆիզիկան, կենսաբանությունը, քիմիան, աշխարհագրությունը, լեզվաբանությունը և այլ ուսումնական բնագավառներ:

Ստոխաստիկայի ամենաբազմազան կիրառություններն այնքան ընդարձակ են, որ կրթական յուրաքանչյուր աստիճանի համար կարելի է գտնել նշված բոլոր ոլորտների ինտեգրման համար համապատասխան նյութ:

Նշված առանձնահատկությունը չի կարելի հաշվի չառնել դասավանդման գործընթացում: Վերջինիս կիրառական բնույթը թույլ է տալիս ամրապնդել մաթեմատիկայի և այլ բնագավառների տարբեր բաժինների գիտելիքները:

Ներկայումս անժխտելի է այն փաստը, որ հավանականային-վիճակագրական գրագիտությունը բավարար հիմք է ժամանակակից մակարդակով բնագիտական և սոցիալ-տնտեսական առարկաների ուսումնասիրության համար: Ստոխաստիկայի միջառարկայական կապերը գիտության այլ բնագավառների հետ կարելի է իրականացնել են մի շարք խնդիրների միջոցով, որոնք ունեն համապատասխան հենք, ուղղվածություն և պրոբլեմատիկա: Այսպես օրինակ, վիճակագրության ուսուցման գործընթացում ներգրավելով տնտեսական, ժողովրդագրական, սոցիալական բնույթի իրական վիճակագրական տվյալներ, հավանականային նյութերը և խնդիրները համաձայնեցնելով կենսաբանության, քիմիայի, ֆիզիկայի, երկրաչափության, հումանիտար գիտությունների դասընթացների հետ՝ լայն հնարավորություններ են ստեղծվում միջառարկայական կապերի ապահովման համար: Նկատենք նաև, որ սովորողների ծանոթացումը ստոխաստիկայի տարրերի հետ նպաստում է ֆիզիկայի, կենսաբանության և քիմիայի հայտնի օրենքների գիտակցված ըմբռնմանը, ցույց է տալիս մաթեմատիկական օրենքների կապը նշված բնագավառների հետ՝ դրանով իսկ ամրապնդելով միջառարկայական կապերը:

Նման միջառարկայական կապերի ապահովումը մեծ հնարավորություններ է ստեղծում ցույց տալու համար մաթեմատիկայի նշանակությունը կիրառական խնդիրների լուծման մեջ: Նշվում է, որ ավանդական մաթեմատիկայի հետ ստոխաստիկայի համաձայնեցմանը խանգարող հիմնական խնդիրներից մեկը ներառարկայական կապերի ոչ բավարար չափով զարգացումն է: Դասընթացի շրջանակներում սովորողներին պետք է ցույց տալ, որ մաթեմատիկան միասնական է:

Լ. Ա Տերեխովան արդարացիորեն նշում է, որ ստոխաստիկական ավանդական մաթեմատիկայում «օտարականի» կարգավիճակում է: Համաձայնելով նրա հետ՝ մենք ևս գտնում ենք, որ մաթեմատիկայի դպրոցական դասընթացում հավանականային-վիճակագրական գիծը ներկայացնելով ոչ թե մեկուսի, այլ օրգանապես ինտեգրելով ընդհանուր դասընթացին՝ կվերացնենք վերջինիս «օտարականի» կարգավիճակը և կապահովենք արդյունավետ ուսումնական գործընթաց: Ստոխաստիկական հասկացությունների և օրենքների կիրառումը նպաստում է մաթեմատիկայի ավանդական թեմաների, ուսուցանվող նյութի ամրապնդմանը:

Այսպիսով՝ մաթեմատիկայի դասաժամերի շրջանակներում ստոխաստիկայի ողջ բովանդակությունն ապահովվելով ներառարկայական և միջառարկայական կապերով՝ պրակտիկորեն բացահայտում ենք մաթեմատիկայի կիրառական կողմը:

Ստոխաստիկական նյութն առանձնահատուկ են նաև նրանով, որ դրա

դասավանդման գործընթացում պահանջված են դառնում ուսուցման տարբեր մեթոդների և հնարների, ուսումնական գործունեության տարբեր տեսակների համադրումը, նոր մեթոդական-տեխնոլոգիական ապահովվածության օգտագործումը, մասնավորապես, աշակերտների տարիքային հետաքրքրություններին համապատասխան ուսուցման ուսումնական և արտաուսումնական ձևերը, փոխներգործուն մեթոդները, դիդակտիկ խաղերն ու իրական տվյալներով փորձերը, այդ թվում նաև նպատակային գործունեությանը միտված կենդանի դիտարկումները, ինչպես նաև միջառարկայական կապեր արտացոլող գործնական ու կիրառական խնդիրները:

Հավանականությունների տեսության ու մաթեմատիկական վիճակագրության այն առանձնահատկությունը, որ դրանք հենվում է փորձարարական հետազոտությունների վրա, պետք է իր համապատասխան արտացոլումը գտնի ստոխաստիկայի ուսուցման բովանդակության և մեթոդների մեջ: Այլ կերպ ասած՝ ուսումնական գործընթացը պետք է կառուցվի փորձարարական հետազոտությունների հիման վրա: Նշված առանձնահատկությունը ուսուցչին կողմնորոշում է դեպի այն, որ համապատասխան հարցերի դասավանդումն իրականացվի հետազոտության տեսքով, երբ սովորողը դեռևս փոքր տարիքից հանդես է գալիս հետազոտողի դերում՝ պատասխանելով իրեն շրջապատող աշխարհի մասին իր մոտ ծագած հարցերին՝ հավաքելով, մշակելով և վերլուծելով անհրաժեշտ տեղեկատվությունը: Դասավանդման գործընթացն ամբողջությամբ կառուցելով կյանքի տարբեր իրավիճակներ նկարագրող նյութի հիման վրա՝ ապահովում ենք սովորողների առօրյա կյանքում մաթեմատիկայի նշանակության գիտակցումը:

Ստոխաստիկական նյութի գեղագիտական գրավչությունը

Ստոխաստիկայի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ նյութի գեղագիտական յուրօրինակ գրավչությունն է: Եվ, հետևաբար, չափազանց կարևոր է նաև հանրակրթության մաթեմատիկայի դասընթացի հավանականային-վիճակագրական նյութի գեղագիտական գրավչության բացահայտման և ուսուցման գործընթացում դրա օգտագործման խնդիրը, ինչը դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից:

Ստոխաստիկական բովանդակային նյութն աչքի են ընկնում իր ինքնատիպությամբ, ունի գեղագիտական արժեքների ձևավորման, գեղագիտական դաստիարակության մեծ ներուժ, ինչն անհրաժեշտ է օգտագործել ինչպես բուն ստոխաստիկական նյութի յուրացման հետագա հաջողությունն ապահովելու, այնպես էլ գեղագիտական արժեքների ձևավորման համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն և ոչ այնքան բուն ստոխաստիկայի միջոցով գեղագիտական արժեքների ձևավորման լրացուցիչ հնարավորությունների ստեղծմանը, որքան ստոխաստիկայի տարրերի ներգրավման միջոցով մաթեմատիկական ողջ նյութի շարադրման գեղագիտական գրավչության

մեծացմանը:

Այդ ներուժն, առաջին հերթին, արտահայտվում է նրա բովանդակային կառույցի լեզվի, կիրառությունների գրավչությամբ, դրանց մեջ գիտական գեղեցիկի օբյեկտիվ հատկանիշների և ուսուցման գործընթացում գիտական գեղեցիկի սուբյեկտիվ հատկանիշների ամենալայն դրսևորումներով, նրա ներառարկայական և միջառարկայական կապերի ուժով, ներքին և արտաքին գեղագիտությամբ [2]:

Ստոխաստիկական նյութը և գործնական՝ վարժությունների և խնդիրների համակարգը հնարավորություն են տալիս ուսումնական գործընթացի մեջ ներգրավել գիտական գեղեցիկի այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են կիրառելիությունը, օգտակարությունը, անսպասելիությունը, անկանխատեսելիությունը, ինտելեկտուալ որոնումը, հայտնագործելը, նպատակաուղղված բարդ ու դժվարին խոչընդոտի հաղթահարումը և այլն:

Բնականաբար, ինչպես բուն ստոխաստիկայի տարրերի ուսուցման, այնպես էլ հատկապես նրանում գեղագիտական տարրի բացահայտումը պահանջում են մանկավարժական և մեթոդական մեծ վարպետություն, որոնցով օժտված կադրերի պատրաստումը բարձրագույն դպրոցի առջև կանգնած լուրջ մանկավարժական խնդիր է:

Պետք է նշենք նաև, որ ուսուցման գործընթացով, դասավանդման մեթոդներով, սովորողների տարիքային առանձնահատկություններով և մի շարք այլ գործոններով պայմանավորված՝ այդ հատկանիշները ստոխաստիկայի ուսուցման գործընթացում ունեն իրենց յուրահատկությունները:

Նկատենք, որ հանրակրթության մաթեմատիկայի դասընթացում ստոխաստիկայի տարրերի ներառումը շոշափելիորեն մեծացնում է մաթեմատիկայի ուսուցման միջոցով գեղագիտական արժեքների ձևավորման հնարավորությունները: Այստեղ ընդգրկվում են հիմնականում մաթեմատիկայի կիրառությունների հետ կապված նոր օբյեկտներ, ինչն իր հերթին, նոր երանգներ է հաղորդում մաթեմատիկական գեղեցիկի օբյեկտիվ հատկանիշներին:

Այսպես օրինակ, ստոխաստիկայի տեսական նյութն ամբողջությամբ՝ իր կիրառական ուղղվածության, խնդիրների համակարգի ընձեռնած հնարավորությունների շնորհիվ, գիտական գեղեցիկի *կիրառելիության* օբյեկտիվ հատկանիշի դրսևորման լայն հնարավորություն ունի:

Ստոխաստիկայի կիրառական ոլորտը ներառում է այնպիսի գիտելիքներ ու կարողություններ, որոնք կազմում մարդու ֆունկցիոնալ գրագիտության անբաժան մասը: Ասվածը վերաբերում է ինչպես կյանքում ստոխաստիկայի ամենալայն կիրառություններին, այնպես էլ սովորողի աշխարհընթերցմանը և աշխարհայացքի ձևավորմանը:

Ստոխաստիկական նյութի ուսուցումը ենթադրում է մաթեմատիկական նպատակաուղղել դեպի իրականության երևույթների ուսումնասիրություն,

պատահական երևույթների օրինաչափությունների գիտակցում և բացահայտում, կիրառական ուղղվածություն, կյանքի և գիտության այլ բնագավառներում առաջացած խնդիրների մոդելավորում և գործնական վարժությունների ու խնդիրների լուծում: Այստեղ գեղագիտական տարրն ավելի ակտիվ է դրսևորվում մաթեմատիկական մոդելավորման ընթացքում: Պատահական երևույթներում դրսևորվում են մաթեմատիկական գեղեցիկի զանազան հատկանիշներ, ինչի պատճառով դրանց գիտակցումը, բացահայտումը և ուսուցումը կարելի է համարել նաև գեղագիտական գործունեություն: Այն կոչված է ստեղծելու աշակերտների ընդունակությունների և ստեղծագործական կարողությունների զարգացման հնարավորություններ, ենթադրում է սովորողի մոտ ձևավորել երևույթների կանխատեսման ունակություններ, առաջադրել վարկածներ, գտնել այլընտրանքային լուծումներ, գնահատել դրանք: Մինևույն ժամանակ, նշված գործընթացները ենթադրում են ինտելեկտուալ որոնում, և դրա արդյունքում գտնելու, հայտնագործելու գործառնության իրականացում, ինչը մաթեմատիկական գեղեցիկի սուբյեկտիվ հատկանիշ է:

Ուսուցման գործընթացում ստոխաստիկական նյութի շարադրանքն ուղեկցելով նրա բազմազան կիրառություններով և արժեքների ձևավորմամբ ապահովում ենք նաև *օգտակարության* գեղագիտական հատկանիշի դրսևորումը, որը ծառայում է նաև որպես ուսուցման մոտիվացիայի աղբյուր:

Օրինակ, դասական «հանդիպման խնդիրը» [4] ունի արտահայտված կիրառական բնույթ: Մասնավորաբար դիտարկենք հետևյալ տարբերակը.

Խնդիր: Երկու նավ պետք է մոտենան մինևույն կառանատեղին: Այդ նավերի՝ նավահանգստին հասնելու պահերը տվյալ օրվա ընթացքում իրարից անկախ են և հավասարահնարավոր: Հայտնի է, որ առաջին նավի կանգառը կառանատեղում տևում է 1 ժամ, իսկ երկրորդինը՝ 2 ժամ: Գտնել նավերից մեկի՝ կառանատեղի ազատմանը ստիպված սպասելու հավանականությունը:

Նման խնդիրների և դրանց լուծման հավանականային հաշվումների միջոցով լուծվում են կյանքի տարբեր իրավիճակներ նկարագրող բազմաթիվ կիրառական խնդիրներ: Այս խնդրի գեղագիտական գրավչությունը առաջին հերթին պայմանավորված է գիտական գեղեցիկի կիրառելիության հատկանիշով:

Այսպիսով՝ ստոխաստիկայի յուրաքանչյուր թեմայի ուսուցման առաջին քայլերից սկսած գիտական գեղեցիկի կիրառելիության հատկանիշի բացահայտումը ոչ միայն թույլ է տալիս ավելի արդյունավետ դարձնել բուն մաթեմատիկայի ուսուցման գործընթացը, այլև՝ ապահովում է սովորողների մոտիվացիայի հարցը, և, հետևաբար, ուսուցման արդյունավետությունը:

Ինչպես արդեն նշել ենք, ստոխաստիկայի առանձնահատկությունների մեկն էլ այն էր, որ նրանում առկա բազմաթիվ փորձարկումների և փաստարկների հետ մեկտեղ քիչ են բանաձևերի քանակը, բացակայում են խրթին հաշվարկները, ինչը լայն շրջանակ է բացում աշակերտների ստեղծագործական գործունեության համար: Իսկ աշակերտների

ստեղծագործական գործունեությունն անմիջապես զուգորդվում է գեղագիտական զգացողությունների հետ:

Այսպիսով՝ ստոխաստիկայի ուսուցման գործընթացում ստեղծագործական տարրի ներառումը զգալիորեն մեծացնում է ուսուցման գործընթացի գեղագիտական գրավչությունը, որտեղ կարող են դրսևորվել մաթեմատիկական գեղեցիկի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հատկանիշներ:

Ստոխաստիկայի ուսուցման գործընթացի կարևոր բաղադրիչներից մեկը ստոխաստիկական խնդիրն է, որը ունի նաև սովորողի գեղագիտական որակների ձևավորման և զարգացման լայն հնարավորություններ: Ստոխաստիկական խնդիրների գեղեցկության բնութագրման հայտանիշ կարելի է համարել դրանց և դրանց լուծման *ինքնատիպությունը, անսպասելիությունը, անկանխատեսելիությունը, կիրառելիությունը, օգտակարությունը, նպատակաուղղված, բարդ ու դժվարին խոչընդոտի հաղթահարումը:*

Խնդրի բովանդակության մեջ ներառելով մաթեմատիկական գեղեցիկի արտահայտման տարբեր դրսևորումներ և խնդրի լուծման ընթացքը լցնելով գեղագիտական գրավչությամբ ապահովում ենք սովորողների մի շարք գեղագիտական որակների զարգացումը:

Զգվանքը սերտորեն կապված է հոգեբանական անվտանգության խնդրի հետ: Սովորողի հոգեբանական անվտանգության խախտման դեպքում այլ հույզերի հետ միասին կարող են դրսևորվել նաև (1) շարքի բոլոր հույզերը: Ըստ Timothy R. Clark-ի, հոգեբանական անվտանգությունն այն վիճակն է, որում մարդիկ իրենց զգում են ա.

ներառված, բ. ապահով են սովորելու, գ. ապահով են իրենց ներդրումն ունենալու համար և դ. մարտահրավեր նետել գործերի առկա վիճակից դուրս գալու համար, և այս ամենը առանց որևէ ձևով պատժվելուց վախենալու (Clark, Timothy R., March 2020): Կլարկը հոգեբանական անվտանգությունը պայմանավորում է մարդու պահանջմունքներով. ներառական անվտանգությունը բավարարում է շփման և պատկանելության մարդկային հենքային պահանջմունքներին:

Ներառականության առաջին՝ ներառված լինելու փուլում արդեն կարող են ի հայտ գալ (1) շարքի բոլոր, այդ թվում նաև՝ զգվանքի հույզերը: Դրա հիմնավոր պատճառ կարող է դառնալ առանձին դասընկերների կողմից մերժումը, սոցիալական խմբի, տվյալ դեպքում՝ դասարանի լիարժեք անդամ լինելուց:

Դժվար չէ նկատել, որ հոգեբանական անվտանգության Քլարկի բնորոշման երկրորդ փուլը հանրակրթության բնագավառի համար հանգում է «սովորել սովորել» մանկավարժական հանրահայտ սկզբունքին [5]: Մաթեմատիկական կրթության պարագայում հոգեբանական անվտանգության ապահովումը այստեղ կապված է մի շարք խնդիրների հետ, որոնք ավանդաբար աչքաթող են արվում: Դրանցից կարևորը գիտելիքի և իմացության՝ հասկանալու, կիրառելու, վերլուծելու, համադրելու և գնահատելու մակարդակների փոխհարաբերության հարցն է, առանց որի լուծման, միայն գիտելիքով բավարարվելը կարող է խաղալ անգամ բացասական դեր: Հարցումները ցույց են տալիս, որ աշակերտների ճնշող մեծամասնությունը անտեղյակ է այս իրողությունից: Եվ այսպես կոչված «գիտելիքի կրթությամբ» առաջնորդվող շատ ուսուցիչներ չեն էլ զգում, թե ինչպես են մաթեմատիկայի ուսուցումը «սերտման» վերածում ու դրանով սովորողին օտարում, շեղում առարկան տիրապետելու բնական ճանապարհից, ինչը բնականաբար շատ աշակերտների մոտ առաջացնում է զգվանքի հուզական ապրումներ՝ առանց դրանց առաջացման աղբյուրը ճանաչելու կամ գիտակցելու: Սովորել սովորելու համար կարևոր է նաև մաթեմատիկայի դասագրքից կամ այլ աղբյուրից օգտվել սովորելը: Շատ ու կենտ աշակերտներ կարելի է գտնել, որոնք կարողանում են պատշաճ մոտեցում ցուցաբերել այս հարցում: Արդյունքը՝ ուսումնական անհաջողություններն են ու շատ դեպքերում զգվանքը այդ դասագրքերից՝ դարձյալ առանց պատճառը հասկանալու:

Հոգեբանական անվտանգության Քլարկի բնորոշման երկրորդ փուլը հանրակրթության բնագավառում հանգում է մասնակցությունը ուսումնական գործընթացին՝ սովորելուն [5]: Վեցնենք թեկուզ դասի՝ նոր նյութի հաղորդման փուլը: Նախ, ոչ բոլոր աշակերտներն են հետևում ուսուցչի բացատրություններին, որովհետև ոչ բոլորն են ունակ հասկանալու այդ բացատրությունները: Բնականաբար նման բացատրությունները աշակերտի համար տհաճ են, իսկ երկար տևելու դեպքում՝ զգվելի: Դասին հետևող աշակերտները նույնպես կարող են ունենալ տհաճության զգացումը, եթե մինչև վերջ չեն հասկանում բացատրությունները, հարցեր չեն կարողանում տալ, հաճախ հոգնում են երկարաշունչ բացատրություններին հետևելուց և այլն:

Հոգեբանական անվտանգության Քլարկի բնորոշման չորրորդ փուլում աշակերտը առանց վախենալու առաջարկում է լուծման նոր եղանակ, կասկած է հայտնում լուծման

ճշգրտության վերաբերյալ և այլն [5]: Հարցումները ցույց են տալիս, որ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում հոգեբանական անվտանգության այս էտապի ցուցիչը բարձր է ցածր դասարաններում: 5-6-րդ դասարաններում կազմում է մինչև 80 տոկոս: Բարձր դասարաններում այն կտրուկ անկում է ապրում՝ 7-9-ում հասնելով 20-30 տոկոսի: Այսինքն, սովորողների հիմնական զանգվածին հասու չէ հոգեբանական անվտանգության այս մակարդակը, իսկ մնացածների վարքագիծն ու հուզական ապրումներն էլ պայմանավորված են ուսուցչի մասնագիտական մակարդակից և դիրքորոշումից:

Զգվանքի ուսուցչական ապրումները: Ուսուցման գործընթացում զգվանքի զգացումը կարող է ապրել նաև ուսուցիչը: Ուսուցչի մոտ զգվանք կարող են առաջացնել առաջին հերթին դասը խանգարող աշակերտները. նրանց գործողությունները ուղղված են ինչպես դասը վարելու ուսուցչական պարտականությունների իրականացման, այնպես էլ ուսուցչի արժանապատվության անտեսմանը դեմ:

Ուսուցչի մոտ հակակրանք, տհաճություն, զգվանք առաջացնող բարոյական գործողություն է նաև ստելը, որ հաճախ է դրսևորվում վատ սովորող աշակերտների կողմից: Օրինակ, չառաջադիմող աշակերտը ներկայացնում է տնային աշխատանքը, որում ներառված վարժությունները նա ակնհայտորեն չի կարող լուծել, և պնդում է, որ ինքն է կատարել առաջադրանքը: Կամ աշակերտը դասից բացակայել է և ակնհայտ կեղծ պատճառաբանություն է ներկայացնում:

Ուսուցչի մոտ զգվանք կարող են առաջացնել նաև առանձին աշակերտների վարքագծերի այլ շեղումներ ընդունված բարոյական նորմերից, որոշ դեպքերում՝ շփումներն աշակերտների ծնողների հետ, ուսումնական գործընթացի հետ կապված այլ գործողություններ և մտքեր:

Հույզերը որպես զգվանքի պատճառ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում

Ք. Իզարդը որպես զգվանքի պատճառ է տեսնում հույզերը, մտքերը և գործողությունները: Դիտարկենք դրանցից յուրաքանչյուրը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Նախ դիտարկենք հույզերը:

Ք. Իզարդը որպես զգվանքի պատճառ դիտարկում է հետևյալ հույզերը և բերում է դրանք զգվանքի պատճառ համարողների տոկոսները հետևյալ կերպ.

- 1) Հոգնածության, թշնամանքի, չհամակրելու զգացում՝ 27,7%;
- 2) Չախողման, անձնական անկարողություն զգացում, չարություն սեփական անձի նկատմամբ, հիասթափություն ինքն իրենից՝ 26,8%;
- 3) Դժգոհություն այլ մարդկանց գործողություններից՝ 17,7%;
- 4) Այլ պատճառներ՝ 27,8%;

Այստեղ դիտարկվող յուրաքանչյուր հույզի համար մենք առաջարկել ենք մաթեմատիկայի ուսուցման գործընթացում դրսևորվող իրադրություն, որը կարող է առաջացնել այդ հույզը և զգվանքի պատճառ հանդիսանալ: Մտացված իրադրությունների ցանկը և դրանց տրված աշակերտական պատասխանները՝ տոկոսներով ներկայացված

են հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 1

Հույզերը որպես զգվանքի պատճառ, միջին դպրոց, մասնակիցների թիվը 42

Հույզը	Հարցը	Բարձր առաջադիմությամբ աշակերտներ	Միջին առաջադիմությամբ աշակերտներ	Ցածր առաջադիմությամբ աշակերտներ
1. Դուր չգալու, չհամակրելու, տհաճության զգացում	a) երբ դասընկերդ խնդրում է թույլ տալ արտագրել տնայինը	83%	63%	21%
	b. երբ դասընկերդ պահանջում է օգնել ստուգողականի կատարման ընթացքում	100%	56%	57%
	c. երբ քո պատասխանի ընթացքում դասընկերդ ցուցադրաբար հուշում է իմանալով, որ դու դրա կարիքը չունես	100%	100%	64%
	d. երբ ուսուցչի բացատրությունը չես հասկանում	83%	56%	36%
2. Ձախտղման, անձնական անկարողության զգացում, չարություն սեփական անձի նկատմամբ, հիասթափություն ինքն իրենից	a. մաթեմատիկական խնդրի լուծել չկարողանալը, երբ այն լուծում են շատերը	92%	50%	21%
	b. ուսուցչի տված հարցերը չհասկանալը	83%	25%	14%
	c. մաթեմատիկայի նոր դասի մեջ այնպիսի նյութերի առկայությունը, որոնց վրա հենվում է դասավանդվող նյութը և որոնք դու չգիտես	75%	31%	71%
	d. երբ չես համարձակվում չհասկացածի մասին հարցեր տալ ուսուցչին	67%	38%	29%
3. Դժգոհություն այլ մարդկանց գործողություններից	a. Ձգում ես, որ դասընկերդ քեզ նախանձում է ուսումնական	92%	81%	71%

	հաջողությունների համար			
	բ. Ջգում ես, որ դասընկերդ քեզ անհարգալից է վերաբերվում, արհամարհում է մաթեմատիկայում ունեցած անհաջողությունների համար	100%	100%	100%
	գ. Ջգում ես, որ ուսուցիչը անհարգալից է քո նկատմամբ մաթեմատիկայում անհաջողությունների պատճառով	92%	56%	93%
	դ. Ջգում ես, որ ուսուցիչը անարդար է քո հանդեպ	100%	81%	100%

1. **Դուր չգալու, չհամակրելու, տհաճության զգացումը:** Հուզական այս զգացումը ներկայացրել ենք Իգարդի դիտարկած՝ հոգնածության, թշնամանքի, չհամակրելու զգացման փոխարեն, ինչը ավելի բնական է աշակերտական միջավայրի համար: Առաջադրված չորս հարցադրումներից առաջինը՝ տնայինը արտագրելու խնդրանքը տհաճություն է պատճառում բարձր առաջադիմությամբ աշակերտների մեծամասնությանը, միջին առաջադիմությամբ աշակերտների կեսից ավելին և թույլերի փոքր մասին: Հավանաբար դա բացատրվում է այդ խմբերի մոտ նշված հույզի պատճառ հանդիսացող գործողության կատարման ինտենսիվությամբ: Նույնը կարելի է ասել նաև հաջորդ՝ «Երբ դասընկերդ պահանջում է օգնել ստուգողականի կատարման ընթացքում» հարցադրման վերաբերյալ, որը տհաճություն է պատճառում բարձր առաջադիմությամբ բոլոր աշակերտներին, իսկ մյուս աշակերտների՝ մոտ կեսին:

Հուշելը տհաճության զգացում է առաջացնում ինչպես բարձր, այնպես էլ միջին առաջադիմությամբ բոլոր աշակերտների և ցածր առաջադիմությամբ աշակերտների կեսից ավելի մոտ: Ուսուցչի բացատրությունը չհասկանալուց տհաճության զգացում է ապրում բարձր առաջադիմությամբ աշակերտների մեծամասնությունը, միջին առաջադիմությամբ աշակերտների մեծ մասը և ցածր առաջադիմությամբ աշակերտների կեսից պակասը: Հավանաբար տհաճություն զգացողները այն աշակերտներն են, որոնք հետևում են ուսուցչի բացատրություններին և աշխատում են հասկանալ դրանք:

Այսպիսով, կարծեք ստացվում է հակասական արդյունք. *տհաճության հուզական ապրումների դրսևորման ինտենսիվությունը մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ուղիղ համեմատական է սովորողների ուսումնական առաջադիմություններին:* Իրականում այստեղ ոչ մի հակասություն չկա, քանի որ զգվանքի կամ տհաճության զգացումը առաջանում է ուսումնական գործընթացի բնականոն ընթացքը խաթարող իրողություններից: Իսկ դա ավելի շատ դուր չի գալիս, անհանգստացնում է, տհաճ կամ

զգվելի է հենց ուսումնական գործընթացի արժեքը գիտակցող, դրա հաջողությամբ շահագրգռված աշակերտներին:

2. Ձախտման, անձնական անկարողության զգացում, չարություն սեփական անձի նկատմամբ, հիասթափություն ինքն իրենից: Ք. Իգարդը այս հույզերը դիտում է զգվանքի հիմնական պատճառների շարքում: Մենք դիտարկել ենք մաթեմատիկայի ուսուցման գործընթացում հույզերի այս խմբի առաջացմանը նպաստող հիմնական իրադրությունները: «Մաթեմատիկական խնդրի լուծել չկարողանալը, երբ այն լուծում են շատերը» իրադրությունը առաջացնում է հուզական այդ ապրումները բարձր առաջադիմությամբ համարյա բոլոր սովորողների, միջին առաջադիմությամբ սովորողների կեսի և ցածր առաջադիմությամբ աշակերտներից քչերի մոտ: Սա նույնպես բնական պետք է համարել, որովհետև բխում է աշակերտական այդ խմբերի ուսումնական հավակնություններից և իրենց ունակությունների նկատմամբ ունեցած կարծիքից:

Նույնը վերաբերում է նաև հաջորդ երկու՝ «ուսուցչի տված հարցերը չհասկանալու» և «մաթեմատիկայի նոր դասի մեջ այնպիսի նյութերի առկայությանը, որոնց վրա հենվում է դասավանդվող նյութը և որոնք դու չգիտես» իրադրությունների պատճառով դիտարկվող զգացումներն ապրելու հույզերին: Այստեղ էլ հիմնականում հուզական ապրումները վերաբերում են բարձր առաջադիմությամբ սովորողներին: Համապատասխան հուզական ապրումներ են ունենում միջին և ցածր առաջադիմությամբ սովորողների կեսից պակասը: Միակ բացառությունը երկրորդ հարցադրման դեպքում ցածր առաջադիմությամբ սովորողների հուզական ապրումների բարձր տոկոսն է. ինչը հավանաբար ցույց է տալիս, որ աշակերտական այդ շերտը իր մեծամասնությամբ, այնուամենայնիվ, ուսումնական գործընթացից օտարման պատճառ համարում է նաև իրեն:

Չհասկացածի մասին ուսուցչին հարցեր տալ չհամարձակվելը նույնպես իր նկատմամբ բացասական հուզական ապրումների հանգեցնող իրադրություն է դիտարկում բարձր առաջադիմությամբ սովորողների մեծ մասը, միջինների կեսից պակասը և ցածր առաջադիմություն ունեցողների կեսից ավելի քիչ մասը:

Այսպիսով հույզերի այս խմբի հիմնական հասցեատերը նույնպես բարձր առաջադիմությամբ սովորողներն են: Դա ցույց է տալիս, որ *աշակերտական այս խումբը իրեն դրսևորում է նաև որպես ուսումնական գործընթացի սուբյեկտ, և շեղումը ուսումնական գործընթացից դիտում է որպես անձնական անհաջողություն, օտարում այդ գործընթացից, ինչը չի կարելի ասել մյուս երկու խմբերի մասին:*

3. Դժգոհությունը այլ մարդկանց գործունեություններից: Հուզական այս ապրումները Ք. Իգարդի մոտ մեծ տոկոս չեն կազմում, սակայն ուսումնական գործընթացում դրսևորվում են լայնորեն: «Զգում ես, որ դասընկերներդ քեզ նախանձում են ուսումնական հաջողությունների համար» իրադրությունը տհաճության զգացում է առաջացնում հարցվող բոլոր խմբերի մեծամասնության, իհարկե ավելի շատ բարձր, ապա՝ միջին և այնուհետև՝ ցածր առաջադիմությամբ սովորողների մոտ: Նշված հույզերի առաջացման պատճառ հանդիսացող հաջորդ իրադրությունը վերաբերում է

ուսումնական անհաջողությունների համար դասընկերների կողմից արհամարհանքին հետևող հույզերին, ինչը տհաճություն է առաջացնում բոլոր հարցվածների մոտ: Սա ցույց է տալիս, որ արդեն պատանեկան շրջանում հարգանքը հստակորեն առկան է սովորողների բարոյական գիտակցության մեջ, և մեծ դեր է խաղում նրանց փոխհարաբերություններում: Եվ այդ հասակում արդեն սովորողը ավելի բարձր է դասում մարդկային-բարոյական հիմնարար արժեքները մասնագիտականի համեմատությամբ:

Հետաքրքիր են նույն՝ մաթեմատիկայում ունեցած անհաջողության պատճառով ուսուցչի անհարգալից վերաբերմունքի պատճառով առաջացած հուզական ապրումների տվյալները: Այստեղ արդեն բարձր և ցածր առաջադիմությամբ սովորողների մեջ կան, թեև շատ քիչ թվով աշակերտներ, որոնց մոտ դա տհաճություն չի առաջացնում: Իսկ միջին առաջադիմությամբ աշակերտների միայն մոտ կեսի մոտ է դա տհաճություն առաջացնում: Հավանաբար սա կարելի է բացատրել նրանով, որ այդպիսի աշակերտները արդարացի են համարում ուսուցչի վերաբերմունքը՝ անհաջողության պատճառ համարելով իրենք իրենց:

Իսկ ընդհանրապես, *այլ մարդկանցից դժգոհության պատճառով առաջացած տհաճության ապրումներում կարծեք աշակերտական միջավայրի շերտավորումը ըստ ուսումնական առաջադիմության մեծ դեր չի խաղում:*

Մտքերը որպես զգվանքի պատճառ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում

Ք. Իզարդը որպես զգվանքի պատճառ դիտարկում է մտքերի հետևյալ խմբերը և բերում է դրանք զգվանքի պատճառ համարողների տոկոսները:

- 1) Ատելություն, թշնամանք, այլ մարդկանց գործողությունների դատապարտում; 24.6%;
- 2) Մտքեր ձախողման, սեփական անկարողության մասին. հիասթափություն ինքն իրենից, զայրույթ ինքն իրենից; 22.3%;
- 3) Պատերազմի, քաղաքականության, ռասիզմի մասին մտքեր; 20.8%;
- 4) Մտքեր գարշահոտ, տհաճ բաների մասին; 14.6%;
- 5) «Կեղտոտ» մտքեր; 4.6%;
- 6) Մենակության, մեկուսացման, մերժման մտքեր; 3.8%;
- 7) Այլ մտքեր; 5.4%;

Նախ Իզարդի կողմից 3-6 կետերում դիտարկված մտքերը մենք միավորել ենք և ուսումնական գործընթացի համար դիտարկել մտքերի մեկ ընդհանուր՝ «Ուսուցման գործընթացում ուսումնական նյութի հետ առնչություն չունեցող մտքեր» խմբում: Այնուհետև դիտարկվող մտքերի յուրաքանչյուր խմբի համար առաջարկել ենք մաթեմատիկայի ուսուցման գործընթացում դրսևորվող իրադրություն, որը կարող է հանգեցնել տվյալ մտքին և զգվանքի պատճառ հանդիսանալ: Ստացված

իրադրությունների ցանկը և դրանց տրված աշակերտական պատասխանները՝ տոկոսներով ներկայացված են 2 աղյուսակով:

Աղյուսակ 2

Մտքերը որպես զգվանքի պատճառ, միջին դպրոց

Մտքերը	Հարցը	Բարձր առաջադիմությամբ աշակերտներ	Միջին առաջադիմությամբ աշակերտներ	Ցածր առաջադիմությամբ աշակերտներ
1. Ատելություն, նախանձ, թշնամանք, այլ մարդկանց գործողությունների դատապարտում	a. իր կամ դասընկերոջ արժանապատվությունը վիրավորող ուսուցչական դիտողության մասին մտածելը	100%	94%	93%
	b. դասընկերոջ կողմից խնդրի չափազանց ինքնատիպ լուծման և ուսուցչի գովասանքի մասին մտածելը	83%	81%	0%
	c. դասընկերոջ կողմից ուսուցչին ակնհայտ սուտ տեղեկություն տալու մասին մտածելը	100%	94%	93%
	d. դասը չիմանալու համար ուսուցչի մոտ արդարանալու միտքը	75%	50%	43%
2. Մտքեր ձախողման, սեփական անկարողության մասին. հիասթափություն ինքն իրենից, զայրույթ ինքն իր դեմ	a. ստուգողականից կամ ուսուցչի հարցումին պատասխանել չկարողանալուց ստացած ցածր գնահատականի մասին միտքը	75%	75%	50%
	b. իմացած դասը պատմել չկարողանալու մասին միտքը	92%	69%	64%
	c. ուսումնական անհաջողության պատճառով ուսուցչից ստացած հանդիմանության մասին միտքը	100%	88%	43%
	d. ուսումնական անհաջողության պատճառով ծնողի հանդիմանության մասին միտքը	100%	88%	64%
3. Ուսուցման գործընթացում ուսումնական	a. դասերը պարտաճանաչ սովորելու համար որոշ	100%	100%	100%

նյութի հետ առնչություն չունեցող մտքեր	աշակերտների կողմից իրեն ծաղրելու մասին մտքերը			
	b. ուսումնական անհաջողությունների համար դասընկերների կողմից իրեն արհամարհելու մասին մտքերը	100%	100%	100%
	c. դասը խանգարելու համար ուսուցչի կողմից քեզ արած դիտողության մասին միտքը, երբ դասը ուրիշն է խանգարել	83%	81%	29%
	d. դասից փախնելու մասին դասընկերների որոշմանը չենթարկվելու մասին միտքը	25%	64%	81%

1. Ատելություն, նախանձ, թշնամանք, այլ մարդկանց գործողությունների դատապարտում: Ք. Իզարդի մոտ նշված բնույթի մտքերը կազմում են զգվանք առաջացնող մտքերի ամենամեծ խումբը: Որպես այս մտքերի առաջացնող պատճառ մենք նախ դիտարկում ենք սովորողի՝ իր կամ դասընկերոջ արժանապատվությունը վիրավորող ուսուցչական դիտողության մասին մտածելը: Եվ այդ մտքերին տրվող տհաճության չափազանց բարձր տոկոսը ցույց է տալիս արժանապատվության վիրավորանքի նկատմամբ աշակերտական վերաբերմունքի մեծ ինտենսիվի մասին: Նշված մտքերին հանգեցնող մյուս իրադրությունը դասընկերոջ կողմից խնդրի չափազանց ինքնատիպ լուծման և ուսուցչի գովասանքի մասին մտածելն է: Այս միտքը փաստորեն խոսում է ավելի շատ նախանձի մասին, ինչը, ըստ հարցումների, ունենում է բարձր և միջին առաջադիմությամբ սովորող աշակերտների ճնշող մեծամասնությունը և որից հետո են ցածր առաջադիմությամբ սովորողները:

Հաջորդ իրադրությունը, որ հանգեցնում է զգվանք առաջացնող մտքերի այս խմբին, դասընկերոջ կողմից ուսուցչին ակնհայտ սուտ տեղեկություն տալու մասին մտածելն է, ինչը տհաճություն է առաջացնում բարձր առաջադիմությամբ բոլոր աշակերտների և մնացածների ճնշող մեծամասնության մոտ: Իսկ ահա դասը չիմանալու համար ուսուցչի մոտ արդարանալու միտքը ավելի շատ անհանգստացնում է բարձր առաջադիմությամբ աշակերտներին:

Համադրելով դիտարկվող բոլոր իրադրություններում ստացված արդյունքները կարող ենք եզրակացնել, որ *այլոց գործողությունների դատապարտման, ատելության, նախանձի հետևանքով առաջացած մտքերի պատճառով տհաճության ապրումի ինտենսիվությունը ուղիղ համեմատական է ուսումնական հաջողություններին: Մասնավորապես, ցածր առաջադիմությամբ սովորողները նմանատիպ առանձին իրադրություններում գրեթե չեն ունենում տհաճության զգացումը:*

2. Մտքեր ձախողման, սեփական անկարողության մասին, հիասթափություն ինքն

իրենից, գայրույթ ինքն իր դեմ: Ք. Իզարդը այս մտքերը դիտում է զգվանք առաջացնող հիմնական մտքերի շարքում: Որպես այս մտքերը առաջացնող իրադրություն մենք դիտարկել ենք մի քանի իրադրություն: Նախ՝ ստուգողականից կամ ուսուցչի հարցումին պատասխանել չկարողանալուց ստացած ցածր գնահատականի մասին միտքը: Այս միտքը սեփական ձախողման կամ ինքն իրենից հիասթափության պատճառ է համարում բարձր և միջին առաջադիմությամբ աշակերտների ճնշող մեծամասնությունը և ցածր առաջադիմությամբ սովորողների կեսը, ինչն արտահայտում է աշակերտական այդ խմբերի վերաբերմունքը ուսումնական գործընթացի նկատմամբ:

Իմացած դասը պատմել չկարողանալու մասին միտքը գերակշռում է բարձր առաջադիմությամբ աշակերտների մոտ, ինչը նույնպես արտահայտում է դրական վերաբերմունք ուսումնական գործընթացի նկատմամբ:

Ուսումնական անհաջողության պատճառով ուսուցչից ստացած հանդիմանության մասին միտքը զգվանքի առաջացնող մտքերի այս խմբին են վերագրում բարձր առաջադիմությամբ բոլոր աշակերտները, միջին առաջադիմությամբ աշակերտների ճնշող մեծամասնությունը և ցածր առաջադիմությամբ աշակերտների կեսից պակասը, ինչը արտահայտում է նաև ուսումնական գործընթացի նկատմամբ սովորողների այդ խմբերի ունեցած պատասխանատվության մակարդակը:

Ուսումնական անհաջողության պատճառով ծնողի հանդիմանությանը մասին միտքը առկա է բարձր առաջադիմությամբ սովորողների բոլոր աշակերտների, միջին առաջադիմությամբ սովորողների ճնշող մեծամասնության և ցածր առաջադիմությամբ սովորողների կեսից ավելիի մոտ: Սա ցույց է տալիս ծնողների առջև պատասխանատվության բարձր զգացումը բարձր և միջին առաջադիմությամբ սովորողների մոտ: Միևնույն ժամանակ, ցածր առաջադիմությամբ սովորողների զգալի մասի համար ուսումնական անհաջողությունները սովորական երևույթ են համարվում նաև ծնողների համար, և այդ ուղղությամբ առաջացած մտքերը նրանց չեն անհանգստացնում կամ էլ նման մտքեր նրանց մոտ չեն առաջանում:

Այսպիսով, *ինչպես ձախողմանը, անկարողությանը, ինքն իրենից հիասթափությանը վերաբերող հույզերի, այնպես էլ այդ հույզերն առաջացնող իրադրությունների վերաբերյալ մտքերի հիմնական հասցեատերը բարձր առաջադիմությամբ սովորողներն են, ինչի բացատրությունը տրվեց նախորդ կետում: Այստեղ նշենք, որ հիշատակված մտքերը համակում են միջին առաջադիմությամբ աշակերտների կեսից ավելիին և ցածր առաջադիմությամբ սովորողների մոտ կեսին, ինչը պետք է դրական երևույթ համարել:*

3. Ուսուցման գործընթացում ուսումնական նյութի հետ առնչություն չունեցող մտքեր: Զգվանք առաջացնող մտքերի այս խումբը Ք. Իզարդը տրոհում է առանձին ենթախմբերի, որոնցից որոշները կապ չունեն ուսումնական գործընթացի հետ: Այդ պատճառով մենք այստեղ, ինչպես նշեցինք վերևում, դրանք միավորել ենք մեկ խմբի մեջ և դիտարկում ենք իրադրություններ, որոնք սովորողներին հանգեցնում են այդ մտքերին:

Դասերը պարտաճանաչ սովորելու համար որոշ աշակերտների կողմից իրեն

ծաղրելու մասին մտքերը: Այս երևույթը տհաճություն է պատճառում բոլոր աշակերտներին՝ անկախ ուսումնական առաջադիմությունից: Այնուամենայնիվ, չնայած դրան, այն մեզանում գոյություն ունի և որոշակի բացասական ազդեցություն է թողնում ուսումնական գործընթացի վրա: Բոլոր աշակերտների կողմից տհաճության կամ զզվանքի ապրումների պատճառ են դիտվում նաև ուսումնական անհաջողությունների համար դասընկերների կողմից իրեն արհամարհելու մասին մտքերը: Դասը խանգարելու համար ուսուցչի սխալ դիտողության մասին միտքը տհաճություն է պատճառում բարձր և միջին առաջադիմությամբ աշակերտների ճնշող մեծամասնությանը: Իսկ ահա ցածր առաջադիմությամբ աշակերտները հավանաբար ընտելացել են նման դիտողություններին, ինչի պատճառով դրանց մասին մտքերը նրանցից քչերին են անհանգստացնում:

Դասից փախնելու մասին դասընկերների որոշմանը չենթարկվելու մասին միտքը տհաճություն է պատճառում բարձր առաջադիմությամբ սովորողների միայն քառորդ մասին: Այսինքն, մնացած մասը համոզված է իր որոշման իրավացիության մեջ և մտահոգություն չունի այդ մասին: Միջին առաջադիմությամբ սովորողների մոտ արդեն նշված հարաբերակցությունը էապես խախտվում է: Իսկ ցածր առաջադիմությամբ աշակերտները ճնշող մեծամասնությամբ տհաճություն են զգում ընկերների որոշմանը չենթարկվելու մտքից:

Այսպիսով, *ուսումնական գործընթացում ուսումնական նյութի հետ առնչություն չունեցող և զզվանք պատճառող մտքերը լինելով բազմազան, տարբեր կերպ են շաղկապվում ուսումնական առաջադիմությունների հետ: Որոշ իրադրություններում, որոնք կապված են բարոյական ընդհանրական նորմերի խախտման հետ, այդ մտքերը կախված չեն ուսումնական արդյունքներից: Իսկ ահա ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում ուղիղ համեմատական են ուսումնական առաջադիմություններին, իսկ աշակերտ-աշակերտ հարաբերություններում՝ հակադարձ համեմատական:*

Գործողությունները որպես զզվանքի պատճառ մաթեմատիկայի ուսուցման գործընթացում

Ք. Իզարդը որպես զզվանքի պատճառ դիտարկում է հետևյալ գործողությունները և բերում է դրանք զզվանքի պատճառ համարողների տոկոսները:

1. Ինքնամեղադրանք; 30,8%;
2. Վրիպում, սխալ քայլ; 25.4%;
3. Ոչ պատշաճ արարքներ, որոնք կատարվել են սեփական կամքին հակառակ՝ այլ մարդկանց ազդեցության տակ; 15.4%;
4. Ուրիշների կողմից դատապարտելի գործողություններ; 12.3%;
5. Իրավական կամ բարոյական չափանիշների խախտում; 10.8%;
6. Այլ գործողություններ; 5.4%;

Դիտարկվող մտքերի յուրաքանչյուր խմբի համար մենք առաջարկել ենք մաթեմատիկայի ուսուցման գործընթացում դրսևորվող գործողություն, որը կարող է զգվանքի պատճառ հանդիսանալ: Ստացված իրադրությունների ցանկը և դրանց տրված աշակերտական պատասխանները՝ տոկոսներով ներկայացված են 3 աղյուսակով:

Աղյուսակ 3

Գործողությունները որպես զգվանքի պատճառ, միջին դպրոց

Մտքերը	Հարցը	Բարձր առաջադիմությամբ աշակերտներ	Միջին առաջադիմությամբ աշակերտներ	Ցածր առաջադիմությամբ աշակերտներ
1. Ինքնամեղադրանքը	a. դասընկերների անկարգության մասին հայտնում ես ուսուցչին	25%	13%	86%
	b. կարող էիր օգնել դասընկերոջդ, բայց չես օգնել	92%	81%	29%
	c. խնդրի լուծումը գիտես, բայց դասընկերոջդ չես ասում	42%	38%	29%
	d. դասընկերներդ որոշում են փախնել դասից, բայց դու մնում ես դասին	17%	25%	38%
2. Վրիպում, սխալ քայլ	a. ուրիշը խանգարում է դասը, բայց ուսուցիչը սխալմամբ դիտողություն է անում քեզ	92%	81%	21%
	b. ուսուցիչը վիրավորում է քեզ դասին պատրաստ չլինելու համար	0%	25%	21%
	c. տնային աշխատանքը արտագրում ես	100%	69%	29%
	d. դասընկերդ դասը պատասխանելիս հույսը դնում է քո հուշելու վրա	100%	81%	64%
3. Ոչ պատշաճ արարքներ, որոնք կատարվել են սեփական կամքին հակառակ՝ այլ մարդկանց ազդեցության տակ	a. չարախոսությունը դասընկերոջ հաջողությունների մասին	25%	36%	14%
	b. դասից «փախնելը»	20%	25%	64%
	c. դասընկերոջը ծաղրելը	0%	25%	14%
	d. դասընկերների հետ երկար ես խաղացել և	8%	25%	57%

	տնայինը չես հասցրել կատարել			
4. Ուրիշների կողմից դատապարտելի գործողությունները	a. դասընկերոջ պարծենկոտությունը ուսումնական հաջողության համար	83%	81%	79%
	b. հաջողության համար դասընկերոջ ցուցամոլությունը	67%	63%	76%
	c. ուսուցչի անարդար գնահատումը	92%	86%	100%
	d. դասընկերոջ մեծամտությունը արտահայտող գործողությունը	100%	81%	43%
5. Իրավական կամ բարոյական չափանիշների խախտում	a. տնային աշխատանքի արտագրությունը	100%	86%	21%
	b. քննության ժամանակ ծածկագրի օգտագործումը	100%	94%	29%
	c. դասընկերոջը ուսումնական անհաջողության համար ծաղրելը	100%	100%	100%
	d. չարախնդությունը դասընկերոջ ուսումնական անհաջողության համար	100%	100%	100%

1. Ինքնամեղադրանքը: Սա, ըստ Ք. Իգարդի, ամենաշատ զգվանք առաջացնող գործողությունն է: Ուսումնական գործընթացում այն տարբեր կերպ է դրսևորվում կախված սովորողների ուսումնական առաջադիմությունից: Դասընկերների անկարգության մասին ուսուցչին հայտնելու և դասին մասնակցելը, երբ դասընկերները որոշել են փախնել դասից, չի դատապարտում բարձր և միջին առաջադիմությամբ սովորողների ճնշող մեծամասնությունը և, ընդհակառակը, զգվանք է առաջացնում վատ սովորողների մեծամասնության մոտ: Դասընկերոջը չօգնելու գործողության դեպքում արդեն նկատվում է հակառակ պատկերը. այն բացասաբար է գնահատում բարձր և միջին առաջադիմությամբ աշակերտների ճնշող մեծամասնությունը և ցածր առաջադիմությամբ սովորողների փոքր մասը: Նման պատկեր է նաև խնդրի լուծումը ընկերոջը չհայտնելու գործողությունը:

Այսպիսով, *ինքնամեղադրանքը աշակերտական միջավայրում կախված է սովորողի ուսումնական առաջադիմությունից: Այն ուղիղ համեմատական է ուսումնական առաջադիմությանը աշակերտ-աշակերտ որոշ հարաբերություններում և հակադարձ համեմատական՝ աշակերտ-ուսուցիչ կամ աշակերտ-դասապրոցես հարաբերություններում:*

2. Վրիպում, սխալ քայլ: Ըստ Ք. Իգարդի այս գործողությունը նույնպես զգվանքի նշանակալից պատճառներից է: Աշակերտական միջավայրում նրա դրսևորումը կախված է սովորողների ուսումնական առաջադիմությունից: Հիմնականում այդ կախվածությունը ունի ուղիղ համեմատականության բնույթ: Այդպես են գնահատվում դասը խանգարելու վերաբերյալ աշակերտին արված ուսուցիչի սխալ դիտողության, տնային աշխատանքի արտագրման, հուշելու գործողությունները, որոնք ըստ էության զգվելի են համարում բարձր առաջադիմությամբ բոլոր աշակերտները, միջին առաջադիմությամբ աշակերտների մեծ մասը և ցածր առաջադիմությամբ աշակերտների շատ փոքր մասը: Իսկ դասին պատրաստ չլինելու համար աշակերտին վիրավորելու ուսուցչական գործողության գնահատումը ունի հակառակ պատկերը. բարձր առաջադիմությամբ աշակերտները դա զգվելի չեն համարում: Զգվելի չեն համարում նաև միջին և վատ առաջադիմությամբ սովորողների շատ փոքր մասը:

Այսպիսով, *ուսումնական գործընթացում վրիպման կամ սխալ քայլի գնահատումը որպես զգվանքի պատճառ նույնպես կախված է սովորողների ուսումնական առաջադիմությունից: Աշակերտ-աշակերտ որոշ երկտեղ հարաբերություններում, անգամ եթե այն ածանցվում է աշակերտ-աշակետ-ուսուցիչ եռակողմ հարաբերությունից, այդ կախվածությունը ուղիղ է, իսկ ուսուցիչ-աշակերտ որոշ երկկողմ հարաբերություններում՝ հակադարձ:*

3. Ոչ պատշաճ արարքներ, որոնք կատարվել են սեփական կամքին հակառակ՝ այլ մարդկանց ազդեցության տակ: Այս արարքները, ըստ Ք. Իգարդի, մեծ տեղ չեն գրավում զգվանք առաջացնող գործողությունների շարքում: Աշակերտական միջավայրում նույնպես սրանք մեծ ազդեցություն չունեն որպես տհաճություն զգվանք առաջացնող գործողություններ, կախված են աշակերտների ուսումնական հաջողություններից և դրսևորվում են տարբեր կերպ՝ կախված դիտարկվող արարքից:

Դասընկերոջ հաջողությունների մասին չարախոսությունը զգվանքի պատճառ է համարում սովորողների կեսից պակասը՝ միջին առաջադիմությամբ, քառորդը՝ բարձր առաջադիմությամբ և ցածր առաջադիմությամբ սովորողների շատ փոքր մասը: Դասից փախնելը տհաճ է համարում բարձր և միջին առաջադիմությամբ աշակերտների մոտ քառորդը և ցածր առաջադիմությամբ սովորողների կեսից ավելին: Շատ ցածր է դասընկերոջը ծաղրելը տհաճություն համարող աշակերտների տոկոսը: Հարկ է նկատել, որ այդ երևույթը մեզանում բավականին տարածված է, և հավանաբար աշակերտական այս հասակում բարոյական գիտակցության մակարդակը դեռևս թույլ չի տալիս հասկանալու մարդկային արժանապատվության ոտնահարման հարցում ծաղրելու նշանակությունը:

Դասընկերների հետ երկար խաղալու պատճառով տնային աշխատանքը կատարել չհասցնելը նույնպես տհաճության պատճառ է համարում բարձր առաջադիմությամբ սովորողների չնչին մասը, միջին առաջադիմությամբ սովորողների քառորդը և ցածր առաջադիմությամբ սովորողների կեսից ավելին: Հավանաբար այստեղ հարցումների

արդյունքները նշելիս սովորողները հաշվի են առել նաև տվյալ գործողության նշանակությունը իրենց պրակտիկայում:

Այսպիսով, *ուրիշների ազդեցության տակ կատարվող ոչ պատշաճ արարքները աշակերտական միջավայրում զգվանքի պատճառ համարողների տոկոսը բավականին ցածր է, ինչի վրա մեր կարծիքով ազդել են հարցվողների տարիքային առանձնահատկությունները՝ կապված բարոյական հասունացման, բարոյական զարգացման մակարդակների հետ:*

4. Ուրիշների կողմից դատապարտելի գործողությունները: Այս գործողությունները, ըստ Ք. Իզարդի, մեծ տեղ չեն գրավում զգվանք առաջացնող արարքների շարքում: Սակայն աշակերտական միջավայրում դրանք կարևոր տեղ են զբաղեցնում: Ուսումնական հաջողությունների համար դասընկերոջ պարծենկոտությունը և, մանավանդ, մեծամտությունն արտահայտող գործողությունը զգվանք է առաջացնում աշակերտական բոլոր խմբերի ճնշող մեծամասնության մոտ, ընդ որում երկու դեպքում էլ զգվանքի ինտենսիվությունը ուղիղ համեմատական է ուսումնական առաջադիմությանը: Ցուցամոլությունը նույնպես բացասաբար է գնահատվում և զգվանք է առաջացնում աշակերտական խմբերից յուրաքանչյուրի կեսից ավելիի մոտ: Սակայն այստեղ ավելի հանդուրժող են միջին առաջադիմությամբ սովորողները և բոլորից շատ այդ գործողությունը տհաճություն է պատճառում ցածր առաջադիմությամբ սովորողներին:

Ուսուցչի անարդար գնահատականը նույնպես որպես զգվանքի պատճառ է համարում հարցվողների ճնշող մեծամասնությունը: Այդպես են համարում ցածր առաջադիմությամբ սովորող բոլոր աշակերտները: Հավանաբար նրանց մոտ իրենց ուսումնական անհաջողությունը ոչ թե օբյեկտիվ իրողությունների, այլ ուսուցչի անարդար գնահատման արդյունք է համարվում:

Այսպիսով, *ուսումնական գործընթացի հետ կապված դատապարտելի գործողությունները զգվանք կամ տհաճություն է համարում աշակերտների բոլոր խմբերում սովորողների ճնշող մեծամասնությունը: Աշակերտների կողմից ցուցաբերված նման արարքների որպես զգվանք գնահատողների ինտենսիվությունը ուղիղ համեմատական է նրանց ուսումնական առաջադիմությանը, իսկ ուսուցչի կողմից նման արարքը ավելի տհաճ է համարվում ցածր առաջադիմությամբ աշակերտների կողմից:*

5. Իրավական կամ բարոյական չափանիշների խախտումը: Նման գործողությունները մեծ տեղ են զբաղեցնում աշակերտի զգվանք առաջացնող հույզերի պատճառների շարքում, թեև Ք. Իզարդի մոտ պատկերը լրիվ հակառակն է: Այսպես, տնային աշխատանքի արտագրությունը զգվելի են համարում բարձր առաջադիմությամբ բոլոր հարցվողները և միջին առաջադիմությամբ հարցվողների ճնշող մեծամասնությունը: Բացառություն են կազմում ցածր առաջադիմությամբ սովորողները, որոնց նույնիսկ քառորդից պակասն է միայն այդ գործողությունը տհաճ համարում: Նույն պատկերն է ստացվել նաև քննության ժամանակ ծածկագրի օգտագործման գործողությունը: Դասընկերոջ անհաջողության համար ծաղրելու կամ չարախոսելու

գործողությունները զգվելի են համարում հարցվող բոլոր աշակերտները՝ անկախ ուսումնական առաջադիմությունից:

Այսպիսով, *իրավական չափանիշների խախտումը զգվանքի պատճառ համարելու ինտենսիվությունը ուղիղ համեմատական է ուսման առաջադիմությանը: Ընդ որում, այդպես են գտնում բարձր առաջադիմությամբ բոլոր սովորողները և ցածր առաջադիմությամբ սովորողների շատ փոքր մասը: Իսկ բարոյական չափանիշների խախտման գնահատման դեպքում աշակերտական խմբերի միջև առկա է կատարյալ համերաշխություն՝ հարցվող բոլոր աշակերտները դրանք համարում են զգվանքի պատճառ: Իրավական և բարոյական մոտեցումների նկատմամբ այս տարբերությունը արդյունք է հայ հասարակական միջավայրի կազմակերպման ավանդական ձևերի:*

Եզրակացություններ

Կատարված ուսումնասիրություններն ու հետազոտական աշխատանքը հնարավորություն են տալիս անելու հետևյալ եզրակացությունները:

1. Զգվանքը և նրա ավելի թույլ տեսակները՝ տհաճությունը, հակակրանքը աշակերտական միջավայրում հաճախ ապրվող հույզերից են:

2. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում զգվանքի, տհաճության և հակակրանքի պատճառ կարող են դառնալ աշակերտական հույզերը, մտքերը և գործողությունները:

3. Մաթեմատիկայի ուսուցման գործընթացում ինչպես տհաճության հուզական ապրումների, այնպես էլ ձախողման, անձնական անկարողության զգացման, սեփական անձի նկատմամբ չարության, ինքն իրենից հիասթափության զգացումների դրսևորման ինտենսիվությունը ուղիղ համեմատական է սովորողների ուսումնական առաջադիմություններին: Իսկ այլ մարդկանցից դժգոհության պատճառով առաջացած տհաճության ապրումներում աշակերտական միջավայրի շերտավորումը՝ ըստ ուսումնական առաջադիմության, մեծ դեր չի խաղում:

4. Այլոց գործողությունների դատապարտման, ատելության, նախանձի, ինչպես նաև անկարողության, ձախողման, ինքն իրենից հիասթափության հետևանքով առաջացած մտքերի պատճառով տհաճության ապրումի ինտենսիվությունը ուղիղ համեմատական է ուսումնական հաջողություններին: Մասնավորապես, ցածր առաջադիմությամբ սովորողները նմանատիպ առանձին իրադրություններում գրեթե չեն ունենում տհաճության զգացումը:

Ուսումնական գործընթացում ուսումնական նյութի հետ առնչություն չունեցող և բարոյական ընդհանրական նորմերի խախտման հետ կապված որոշ իրադրությունների վերաբերող զգվանք պատճառող մտքերը կախված չեն ուսումնական արդյունքներից: Դրանք ուսուցիչ-աշակերտ փոխհարաբերություններում ուղիղ համեմատական են ուսումնական առաջադիմություններին, իսկ աշակերտ-աշակերտ հարաբերություններում՝ հակադարձ համեմատական:

5. Ինքնամեղադրանքի գործողությունը աշակերտական միջավայրում կախված է ուսումնական առաջադիմությունից: Այն ուղիղ համեմատական է ուսումնական առաջադիմությանը աշակերտ-աշակերտ որոշ հարաբերություններում և հակադարձ համեմատական՝ աշակերտ-ուսուցիչ կամ աշակերտ-դասապրոցես հարաբերություններում: Մոտավորապես նույնն է պատկերը վրիպման և սխալ քայլի դեպքում:

Ուրիշների ազդեցության տակ կատարվող ոչ պատշաճ արարքները աշակերտական միջավայրում զգվանքի պատճառ համարողների տոկոսը բավականին ցածր է, ինչի վրա ազդել են հարցվողների տարիքային առանձնահատկությունները՝ կապված բարոյական հասունացման, բարոյան զարգացման ոչ բարձր մակարդակների հետ:

Ուսումնական գործընթացի հետ կապված դատապարտելի գործողությունները զգվանք կամ տհաճություն են համարում աշակերտների բոլոր խմբերում սովորողների ճնշող մեծամասնությունը: Աշակերտների կողմից ցուցաբերած նման արարքների որպես զգվանք գնահատականների ինտենսիվությունը ուղիղ համեմատական է նրանց ուսումնական առաջադիմությանը, իսկ ուսուցչի կողմից նման արարքը ավելի տհաճ է համարվում ցածր առաջադիմությամբ աշակերտներին:

Իրավական չափանիշների խախտումը զգվանքի պատճառ համարելու ինտենսիվությունը ուղիղ համեմատական է ուսման առաջադիմությանը: Ընդ որում, այդպես են գտնում բարձր առաջադիմությամբ բոլոր սովորողները և ցածր առաջադիմությամբ սովորողների շատ փոքր մասը: Իսկ բարոյական չափանիշների խախտման գնահատման դեպքում աշակերտական խմբերի միջև առկա է կատարյալ համերաշխություն՝ հարցվող բոլոր աշակերտները դրանք համարում են զգվանքի պատճառ:

Գրականության ցանկ

1. *APA Dictionary of Psychology 2nd Ed [2015].pdf*, <https://www.docdroid.net/Nj6xnu3/apa-dictionary-of-psychology-2nd-ed-2015-pdf#page=338>.
2. *Большой толковый словарь русских существительных*, <https://gramota.ru/meta/otvrashchenie>
3. *Толковый словарь Даля онлайн*, Даль <https://slovardalja.net/word.php?wordid=22726>
4. *Керол Э. Изард (1999). Психология эмоций, С.-П., 1999.*
5. *Микаелян Г. С. (1999). Эстетические основы математического образования, Монография/Г. С. Микаелян, Под общ. ред. Е. А. Лодатко, Ереван-Черкаскы, 2019 г.*
6. *Микаелян Г.С. (2022). Ценностно-ориентированное обучение математике в условиях цифровизации как фактор психологической безопасности обучающихся, VI международная конференции Информатизация образования и методика электронного обучения: цифровые технологии в образовании. Красноярск, 20 – 23 сентября 2022 г.*

7. *Clark, Timothy R. (March 2020). The 4 Stages of Psychological Security: Determining the Path to Integration and Innovation. Berrett-Kohler. ISBN 9781523087686. Bloom, B. S. (Ed.), Englehart, M.D Furst, E.j., Hill, W. H. and Krathwohl, D. R. A Taxonomy of Educational Objectives: Handbook I, the Cognitive Domain. New York. 1956.*

**ԶԶՎԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ
ԲԱՑԱՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ ԵՎ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ**
Միքայելյան Համլետ Սուրենի

Ամփոփում: Զգվանքը (և նրա թույլ ձևերը՝ տհաճությունը, հակակրանքի զգացումը) աշակերտական միջավայրում ամենահաճախ դրսևորվող հուզական ապրումներից է: Զգվանքի պատճառ կարող են դառնալ ինչպես հույզերը, այնպես էլ մտքերը և գործողությունները: Զգվանքի պատճառները հանգամանորեն ուսումնասիրել է Ք. Իզարդը, ով առաջադրել է զգվանքի պատճառ հանդիսացող հիմնական հույզերը, մտքերը և գործողությունները, փորձական ճանապարհով ցույց է տվել առաջադրված այդ պատճառներից յուրաքանչյուրի կշիռը զգվանքի յուրաքանչյուր տեսակում: Սույն աշխատանքում դիտարկվում են զգվանքի՝ Ք. Իզարդի առաջադրած պատճառները մաթեմատիկայի ուսուցման գործընթացում: Ի տարբերություն Իզարդի, այստեղ հնարավորություն է ստեղծված հետևելու զգվանքի դրսևորումների կախվածությանը աշակերտական առաջադիմություններից: Ինչպես հույզերի, այնպես էլ մտքերի և գործողությունների պարագայում զգվանքի դրսևորումները հիմնականում կախում ունեն ուսումնական առաջադիմություններից և դրանց ինտենսիվությունը մեծ մասամբ ուղիղ համեմատական են ուսումնական առաջադիմությանը: Դա բացատրվում է նրանով, որ բարձր առաջադիմությամբ սովորողների մեծ մասը իրենց զգում է որպես ուսումնական գործընթացի սուբյեկտ և զգվանք առաջացնող ուսումնական անհաջողությունները դիտում է որպես անձնական անհաջողություն: Ուսումնական հաջողությունների հետ զգվանքի ինտենսիվության կախվածության բնույթը պայմանավորված է նաև ուսումնական գործընթացի մասնակիցներից: Աշակերտ-աշակերտ երկկողմ հարաբերություններում այդ կախվածությունը հիմնականում ուղիղ համեմատական է, իսկ աշակերտ-ուսուցիչ երկկողմ հարաբերություններում՝ հակադարձ համեմատական: **Բանալի բառեր:** Մաթեմատիկայի ուսուցման գործընթաց, հույզեր, զգվանք, տհաճություն, հակակրանք, մտքեր, գործողություններ:

ОТВРАЩЕНИЕ КАК ФАКТОР, НЕГАТИВНО ВЛИЯЮЩЕЕ НА ПРОЦЕСС ПРЕПОДАВАНИЯ МАТЕМАТИКИ, И ПРИЧИНЫ ЕГО ВОЗНИКНОВЕНИЯ

Микаелян Гамлет Суренович

Резюме. Отвращение (и его слабые формы - чувство неприятности, антипатии) - одно из наиболее часто проявляющихся эмоциональных чувств в студенческой среде. Отвращение может быть вызвано чувствами, мыслями и действиями. Причины отвращения были изучены К. Изардом, который предложил основные чувства, мысли и действия, вызывающие отвращение и экспериментально продемонстрировал вес каждой из предложенных им причин в каждом виде отвращения. В данной статье рассматриваются причины отвращения, предложенные Изардом, в процессе обучения математике. В отличие от Изарда, здесь можно наблюдать зависимость проявлений отвращения от успеваемости учащихся. Как и в случае с чувствами, мыслями и действиями, проявление отвращения и его интенсивность во многом зависят от успеваемости и прямо пропорциональны успеваемости учащихся. Это объясняется тем, что большинство успешных студентов ощущают себя субъектами образовательного процесса и рассматривают учебные неудачи, вызывающие отвращение, как личностные неудачи. Характер зависимости интенсивности отвращения от учебных успехов определяется также участниками образовательного процесса. В двусторонних отношениях ученик-ученик эта зависимость обычно прямо пропорциональна, тогда как в двусторонних отношениях ученик-учитель она обратно пропорциональна.

Ключевые слова. Процесс обучения математике, эмоции, отвращение, неприятность, неприязнь, мысли, действия.

DISGUST AS A FACTOR NEGATIVELY INFLUENCED ON THE PROCESS OF TEACHING MATHEMATICS AND REASONS FOR THE APPEARANCE

Mikaelian Hamlet Suren

Summary. Disgust (and its weak forms - a feeling of unpleasantness, antipathy) is one of the most frequently manifested emotional feelings in a student environment. Disgust can be caused by feelings, thoughts and actions. The causes of disgust have been carefully studied by K. Izard, who proposed the basic feelings, thoughts and actions that cause disgust, and experimentally demonstrated the weight of each of his proposed reasons in each type of disgust. In this paper, the causes of disgust proposed by Izard are considered in the process of teaching mathematics. Unlike Izard, here it is possible to observe the dependence of manifestations of disgust on students' performance. As in the case of feelings, thoughts and actions, the manifestation of disgust and its intensity largely depend on academic performance and is directly proportional to the performance of students. This is explained by the fact that most successful students feel

themselves to be subjects of the educational process and consider educational failures that cause disgust as personal failures. The nature of the dependence of the intensity of disgust on educational success is also determined by the participants in the educational process. In bilateral student-student relationships this relationship is generally directly proportional, while in bilateral student-teacher relationships it is inversely proportional.

Key words. The process of learning mathematics, emotions, disgust, unpleasantness, hostility, thoughts, actions.

Mathematics in school

Математика в школе

Մաթեմատիկան ԴՊՐՈՑՈՒՄ

Գիտամեթոդական ամսագիր
Scientific methodical journal
Научно-методический журнал

ISSN 1829-4111

№ 4 (117) 2024



ՀԱՍՏ Երևան, Խանջյան 5, 314 սենյակ
ASPU Yerevan, Khanjyan 5, room 314
АГПУ Ереван, Ханджяна 5, комната 314
<https://mathinschool.aspu.am/>
e-mail: h.s.mikaelian@gmail.com

